

## 2009-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՆԱՀԱՆՋ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է

«Լրագրողներ Առանց Սահմաններու» իրաւապաշտպան կազմակերպութիւնը Երեքշաբթի, Հոկտեմբեր 20-ին հրապարակած է մամուլի ազատութեան 2009 թուականի աղիւսակը, որու համաձայն՝ Հայաստան անցեալ տարուայ 101-րդ տեղէն իջել է 111-րդ տեղը:

2008-ի ցուցանիշով Հայաստանը ունէր 22,75 կէտ, իսկ այս տարի՝ 31,13:

Աղիւսակի առաջին հինգ տեղերը գրաւած են Տանիմարքը, Ֆինլանտան, Իրլանտան, Նորվեգիան եւ Շուէտլը որոնք ունին 0 ժխտական կէտ:

Հայաստանի դրացիներէն վրաստան 81-րդ տեղն է, Թուրքիան՝ 122-րդ, Ատրպէյճան՝ 146-րդ, իսկ Իրանը 172-րդն է:

Թուսաստանը մամուլի ազատութեան աղիւսակի վրայ 153-րդ տեղն է:

«Մամուլի ազատութիւնը պէտք է պաշտպանել ամենուր եւ նոյն եռանդով ու վճռականութեամբ», - ըսած է «Լրագրողներ Առանց Սահմաններու» կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Ժան-Ֆրանսուա Ժուլիար եւ աւելցուցած. - «Շատ մտահոգիչ է, երբ եւրոպական դեմոկրատիաները՝ Ֆրանսան, Իտալիան, Սլովակիան անկում կը գրանցեն: Ինչպէ՞ս մենք կրնանք քննադատել մարդու իրաւունքներու ոտնահարումը այլ երկիրներու մէջ, երբ անոնք չեն ապահովուիր ներսը»:

Մամուլի ազատութեան աղիւսակի վերջին երեք՝ 173-րդէն 175-րդ տեղերը կը գրաւեն Թուրքմենստան, Հիւսիսային Քորէա եւ Էրիթրէա:

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՄԵՐ ՇՈՒՇԻՆ» ԹԵԼԵԹՈՆԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ

Այս տարի եւս, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը կը պատրաստուի իր տարեկան նուիրահաւաքին՝ թեյեթոնին, որ տեղի պիտի ունենայ Գոհաբանութեան տօնին օրը՝ Հինգշաբթի, Նոյեմբեր 26-ին, Լոս Անճելըսի Ժամով առաւօտեան ժամը 8:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00:

Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի բաժանմունքի ատենապետ, իրաւաբան Արա եւ ձուլիա Ակիշեաններու բնակարանին մէջ, քողագերծուեցաւ այս տարուան՝ 12-րդ թեյեթոնին խորհրդանշանը, զոր պատրաստած է Էտիկ Բալայեանը, եւ որ ատեղծուած է Շուշիի Ղազանչեցոց եկեղեցւոյ զանգակատան վրայ գտնուող հրեշտակի նշանին հիման վրայ:

Երեկոյեան պատուոյ հիւրն էր Բրիտանիայէն պարոնուհի Գարոլայն Գոքար, որ այս առիթով ստացած է «Արցախի Հրեշտակ» մրցանակը:

Ներկայ էին նաեւ Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի բաժանմունքի հոգաբարձական մարմինի անդամներն ու Լոս Անճելըսի մօտ Հայաստանի հիւպատոս Գրիգոր Յովհաննէսեանը:

## ԹՈՒՐՔ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԴԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԸ ԿԱՊԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԵՐԿԿՈՂՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ «ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀՈՂԵՐԸ ՄԵՋ ՀԱՄԱՐ ՍՈՒՐԲ ՀՈՂԵՐ ԵՆ», - ԸՍԱԾ Է ՏԱԿՈՒԹՕՂՈՒ

Հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման ձգտող Արձանագրութիւններու ստորագրումէն ետք, թուրք պատասխանատուները, ամենէն բարձր մակարդակներու վրայ կը շարունակեն երկկողմ յարաբերութիւններու հետագայ զարգացումը կապել դարաբաղեան հարցի լուծման հետ:

«Հայ - թրքական յարաբերութիւններու բարելաւումը կ'ազդէ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման վրայ», - յայտարարած է Թուրքիոյ նախագահ Ապտուլա Կիլը, թրքական հանրային հեռուստատալիքին տրուած հարցազրոյցի մը ընթացքին:

«Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորումը նպատակ ունի կարգաւորել իրավիճակը ամբողջ տարածաշրջանէն ներս», - յայտարարած է Թուրքիոյ դեկավարը ու աւելցուցած. - «Քանի դեռ չէ լուծուած հայ - ատրպէյճանական հակամարտութիւնը, անհնար է Կովկասի մէջ խաղաղութիւն եւ ապահովութիւն հաստատել»:

Շեշտելով, թէ Լեւոնային Ղաբաբաջին ու շրջակայ եթ տարածքները 18 տարի է ի վեր «գրաւուած են», Կիլը կարծիք յայտնած է, որ այժմ, հայ-թրքական բանակցութիւններու շնորհիւ, այդ հարցը կրկին յայտնուած է միջազգային հանրութեան օրակարգին վրայ:

Անցնող շաբաթավերջին, Թուրքիոյ նախագահը հեռաձայնային զրոյց մը ունեցած է Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի հետ, որու ընթացքին, այլ հարցերու շարքին



Թուրքիա-Հայաստան ֆուքայոլի խաղի ընթացքին՝ երկու երկիրներու դեկավարները բարձր տրամադրութեան մէջ...

քննարկուած են տարածաշրջանային հրատապ խնդիրներ: Քննարկուած է նաեւ հայ-թրքական յարաբերութիւններու ընթացքը: Թրքական աղբիւրներու համաձայն, զրոյցի ընթացքին Ապտուլա Կիլը յորդորած է Միացեալ Նահանգներու ակտիւացնել ջանքերը դարաբաղեան հակամարտութիւնը կարգաւորելու ուղղութեամբ:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմեդ Տավութօղլու, իր հերթին, Երկուշաբթի օր յայտարարած է, որ «ատրպէյճանական»

«ատրպէյճանական» հակամարտութիւնը կարգաւորելու ուղղութեամբ:

Մարտ 1-ին իրադարձու-

Մարտ էջ 4

## ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ ՍԿԱՄԻ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ



Նիկոլ Փաշինեանի դատավարութեան առթիւ հաւաքուած ցուցարարներ

Երեքշաբթի, Հոկտեմբեր 20-ին Երեւանի Շէնգաւիթ համայնքի ընդհանուր իրաւաստութեան դատարանէն ներս սկսաւ «Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի դատավարութիւնը, որ կը նախագահէր Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքներու ընդհանուր իրաւաստութեան դատարանի դատաւոր Մնացական Մարտիրոսեան:

Քրէական օրէնսգրքի 225 յօդուածի առաջին մասով՝ «զանգուածային անկարգութիւններ կազմակերպելը», եւ 316 յօդուածի առաջին մասով՝ «իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութիւն գործադրելը»: Այս յօդուածներով սահմանուած ամենախիստ պատիժը 10 տարուայ բանտարկութիւնն է:

Մարտ 1-ին իրադարձու-

Մարտ էջ 4



Շնորհակալութիւն յայտնելէ ետք հիմնադրամին նեցուկ կանգնող նուիրատուներուն, Արա Ակիշեան շեշտեց, թէ որոշուած է այս տարուան թեյեթոնին հասոյթը յատկացնել Շուշիի վերականգնելու աշխատանքներուն, եւ այդ պատճառով, որոշուած է թեյեթոնը կոչել «Մեր Շուշին»:

# ՕՐՈՒԱՆ ԸԱՐՅԵՐՈՒՆ ԵՏ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ՝ ԵՐԷԿ ՈՒ ԱՅԱՕՐ

Գ. ԽՈՏԱՆՆԱՆ

Վերջին շրջանին Հայաստանի իշխանութիւններու եւ յատկապէս Սերժ Սարգսեանի վարած ներքին ու արտաքին քաղաքականութիւնը քննադատողներու առաջին շարքերուն վրայ կը յայտնուի Ռոբերտ Քոչարեանի օրօք տասը տարի շարունակ արտաքին գործոց նախարարի պաշտօնը վարած Վարդան Օսկանեան, զարմանքի մատնելով ու ապշահար ձգելով բոլոր անոնց, որոնք քիչ թէ շատ հետեւած են երկրի քաղաքական կեանքի վերջին տարիներու զարգացումներուն:

Անցեալ շաբթուայ ընթացքին «Առաւօտ» օրաթերթի մէջ հրատարակուած վերլուծութեան մը մէջ, քննադատութեան ենթարկելով հայ-թրքական երկու Արձանագրութիւններուն մէջ տեղ գտած պայմանները, Օսկանեան կը ծանրանայ Լեւոնայի Ղարաբաղի, Յեղասպանութեան եւ հողային պահանջատիրութեան հարցերով հայկական կողմի կատարած զիջումներուն վրայ, հիմնական այն երեք կէտերը, որոնց վրայ ընդհանրապէս կը կեդրոնանան Արձանագրութիւններուն դէմ բոլոր արտադատողները:

Պաշտօնէն դուրս գալէ ետք, իր հիմնադրած ու ղեկավարած «Սիլիլիթաս» հիմնադրամի միջոցաւ ու նաեւ առանձին ելույթներով Վարդան Օսկանեան հանդէս կու գայ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ու ներքին քաղաքական ու տնտեսական բարեփոխումներու որպէս ջատագով:

Մի քանի ամիս առաջ Նիւ Եորքի մէջ ունեցած մէկ ելույթի ընթացքին, ունկնդիրներէն մէկուն կողմէ Մարտ 1-ի իրադարձութիւններուն վերաբերող հարցումի մը պատասխանելով Վարդան Օսկանեան կը յայտարարէր, որ այդ օրը իր աչքերուն մէջ արցունք կար:

Այս բոլորը բնականաբար ողջունելի են, սակայն դժբախտաբար, Օսկանեանը զերծ չեն կրնար պահել Ռոբերտ Քոչարեանի իշխանութեան օրօք իր ունեցած տխուր դերակատարութեան պատասխանատուութենէն:

Ամէն անգամ երբ կը ծանօթանանք Վարդան Օսկանեանի նոր տեսակէտներուն, կամայակամայ կը լիչենք պաշտօնավարութեան շրջանին անոր ունեցած կեցուածքներն ու գործունէութիւնը, որոնք երկիրը հասցուցին այսօրուայ վիճակին:

Ասկէ ուղղիդ տասը տարիներ առաջ՝ 1999 թուականի Հոկտեմբեր 27-ին Հայաստանի խորհրդարանէն ներս տեղի ունեցաւ քստմենլի ոճրագործութիւն մը, որուն զօհ գացին Ազգային Ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանը, Վարչապետ Վազգէն Սարգսեանը եւ կառավարութեան ու խորհրդարանի բազմաթիւ անդամներ: Այդ օրը, երբ ահաբեկիչները տակաւին ձերբակալուած չէին ու զոհերու դիակները դուրս չէին բերուած խորհրդարանի դահլիճէն, արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան CNN-ի եւ միջազգային այլ լրատուամիջոցներու պատասխան վրայ կը յայտարարէր, որ ահաբեկիչներու ետին այլ ուժեր չկան: Հետագային, այս եղաւ Քոչարեանի ամրապնդուած իշխանութեան առաջ քաշած միտքը ու այդ ուղղութեամբ ալ առաջնորդուեցաւ «Հոկտեմբեր 27-ի» դատավարութեան ամբողջ ընթացքը:

Հայաստանի մէջ շարունակաբար կեղծուող հերթական ընտրութիւններէն մէկուն առթիւ, պատահածը արդարացնելով, Վարդան Օսկանեան չվարանցաւ կատարելու ծիծաղելի յայտարարութիւն մը, ըսելով թէ, կեղծիքները եղած են երկուստեք՝ թէ՛ ընդդիմութեան եւ թէ՛ իշխանութիւններու կողմէ:

Երբ Ռոբերտ Քոչարեան հրապարակաւ յայտարարեց որ, թուրքիոյ կողմէ Յեղասպանութեան ճանաչումը, Հայ Ժողովուրդին իրաւական հիմք չի տար հողային պահանջ ներկայացնելու, Օսկանեան ջանք չի նայեց արդարացնելու իր մեծաւորի կտրուկ խօսքերը:

Լեւոնայի Ղարաբաղի գինեալ ուժերու հսկողութեան տակ գտնուող շրջաններու մասին խօսելով Օսկանեան ինք էր որ, այդ տարածքները որակեց՝ «գրաւեալ»:

Մարտ 1-ի ողբերգական իրադարձութիւններու երեկոյեան, Վարդան Օսկանեան եղաւ այն մարդը, որ սպառնաց արտակարգ դրութիւն յայտարարելու մասին: Իր այդ խօսքերէն կարճ ժամանակ ետք, հրասայլերը շարժեցան դէպի Երեւան ու անօրինական զինեալ միաւորներ սկսան կրակել անմեղ ժողովուրդի ուղղութեամբ: Այս դէպքերը պատրուակ օգտագործելով, Օսկանեանի խօսքերը դարձան իրականութիւն ու Երեւանի մէջ յայտարարուեցաւ արտակարգ ու զինուորական իրավիճակ՝ խախտելով ժողովրդավարութեան բոլոր սկզբունքները ու մեկուսարանները լեցնելով քաղաքական բանտարկեալներով:

Տակաւին կարելի է երկարել շարքը, սակայն այսքան իսկ բաւարար է նկատելու, որ իր տասնամեակ պաշտօնավարութեան ընթացքին Վարդան Օսկանեան խօսած ու գործած է տարբեր սկզբունքներով, նպատակով բռնատիրական վարչակարգի մը հաստատման:

Սերժ Սարգսեան ներկայիս ժառանգորդն ու շարունակողն է Քոչարեան-Օսկանեան ներքին ու արտաքին քաղաքականութեան: Հետեւաբար, այս երկուքի կողմէ կատարուած քննադատութիւնները, կարելի է նկատել «ոչ պարկեշտ», իրենց նախկին գործակիցի նկատմամբ:

Ինչպէս որեւէ քաղաքական մարդ, Օսկանեան եւս իրաւունք ունի վերատեսուելու ենթարկելու իր անցեալի կեցուածքները: Սակայն, հոն հասնելու համար ին պարտաւոր է նախ եւ առաջ ինքզինու կապը այդ անցեալին հետ ու ընդունելու իր սխալները, եւ ոչ թէ՛ փորձել վերականգնել այդ նոյն անցեալը:

Քաղաքականութեան մէջ յաճախ կրկնուած խօսք մը կայ որ կ'ըսէ՝ «Ժողովուրդի յիշողութիւնը շատ կարճ է»: Սակայն, ոչ այնքան կարճ՝ որքան կը կարծէ Վարդան Օսկանեան:

Քաղաքականութեան մէջ յաճախ կրկնուած խօսք մը կայ որ կ'ըսէ՝ «Ժողովուրդի յիշողութիւնը շատ կարճ է»: Սակայն, ոչ այնքան կարճ՝ որքան կը կարծէ Վարդան Օսկանեան:

# ՖԵՆՈՂԱԼԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՂԻՇԷՄԵԾԱՐԵՆՑ

Հոկտեմբերի 17-ին Հայաստանում մեծ շուքով տեղի է ունեցել Աժ նախագահ Հովիկ Աբրահամեանի եւ Աժ պատգամաւոր Գագիկ Ծառուկեանի զաւակների՝ Աբրահամեանի որդու եւ Ծառուկեանի դստեր հարսանիքը: Այն եղել է բաւականին շքեղ, ծախսուել են մեծ փողեր, ինչը նաեւ զարմանալի չէ: Հայաստանի մեծահարուստները, որոնց թուին են պատկանում Հովիկ Աբրահամեանն ու Գագիկ Ծառուկեանը, չեն սիրում խնայել իրենց վրայ, առաւել եւս իրենց զաւակների վրայ, եւ առաւել եւս, որ նրանք ինչ անում են՝ «երեխէքի համար են անում»:

Այդպէս, «երեխէքի համար էլ» նրանք թերեւս երեխէքին ամուսնացնում են իրար հետ: Այդ երեւոյթը, երբ իշխանութիւն ու

չփուռ, որ նրանցից որեւէ մեկի հետ կեանք կապելու հաւանականութիւն լինի: «էլիտան» ոչ միայն ինքն է թիկնազօրով շրջապատում, այլ նոյնն անում է զաւակներին եւ որեւէ մէկը չի կարող որեւէ կերպ շփուած ունենալ նրանցից որեւէ մեկի հետ, բացի պարզապէս բարեւելուց: Բնական է, որ այդ պայմաններում երեխաները որեւէ զգացմունք կ'ունենան միայն իրար հանդէպ, քանի որ միայն իրար հետ են շփուած իրար հարսանիքների կամ քեֆ-ուրախութիւնների ժամանակ:

Նրանք չունեն որեւէ այլ մարդու ճանաչելու հնարաւորութիւն: Եւ գուցէ ստանում են այնպիսի դաստիարակութիւն եւ նրանց մօտ ձեւաւորում է այնպիսի աշխարհայեացք, որ նրանք նոյնիսկ չեն էլ փորձում այլ մարդկանց հետ շփուելու անհրաժեշտութեան մասին մտա-

Երբ իշխանութիւն ու հարստութիւն ունեցող գործիչներն իրար հետ խնամիւհանում են, յատուկ է մոնարխիստական կամ ֆեոդալական ժամանակաշրջաններին, երբ խնամիւհանալով լուծուել են անվտանգութեան հետ կապուած հարցեր, փորձ է արուել պահպանել իրենց վրայ, եւ այդ մարդկանց ճանաչել, որ գոնէ այդ տոււն իրենց չյաղթի:

Հարստութիւն ունեցող գործիչներն իրար հետ խնամիւհանում են, յատուկ է մոնարխիստական կամ ֆեոդալական ժամանակաշրջաններին, երբ խնամիւհանալով լուծուել են անվտանգութեան հետ կապուած հարցեր, փորձ է արուել պահպանել իրենց վրայ, եւ այդ մարդկանց ճանաչել, որ գոնէ այդ տոււն իրենց չյաղթի:

Ծել, այլ մարդկանց ճանաչել, ընդդիմանալ իրենց «էլիտար» մեկուսացմանն աշխարհից: Նրանք մեծանում են նոյն արժէքներով, ինչ իրենց հայրերը, ու բնականաբար համարում են, որ իրենց արժանի են միայն իրենց նմանները եւ իրենք էլ արժանի են միայն իրենց նմաններին, իսկ մնացեալ մարդկութիւնը նրա համար է, որ զարմանալ իրենց շքեղ հարսանիքների վրայ:

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՍԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԻ՝  
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶՆԱՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ  
 Փեռ. (626) 797-7680  
 Ֆաքս. (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party  
 of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 3 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second  
 Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail),  
 \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍՏԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ ՀԱԿԱԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՉԵՐԻ ՀԱՄԱՐ

«Երբ»-ի խմբագրությունն է այցելել «Ազգային պահպանողական շարժում» հ/կ վանաձորեան գրասենեակի ղեկավար Մանուէլ Կոստանդեանը, ով քաղաքից չբացակայելու ստորագրություններ բաց էր թողնում և ուստի կանոններին համարձակվում էր: Մանուէլ Կոստանդեանը ուստիկանությունների բաժանմունք է տարուել «հակաթուրքական արտայայտություններ անելու, ժողովրդի մէջ թշնամանք սերմանելու համար»:



հակաթուրք կոչեր ընելու մեղադրանքով ձերբակալուած՝ Մանուէլ Կոստանդեան

«Ազգաբազմը են գրասենեակի բանալիները: Կիրակի օրը լրագրողների ներկայությունները մեզ յանձնեցին բանալիները, բայց անձնագրերն իրենց մօտ են», - «Երբ»-ի թղթակցին հաղորդել է Մ. Կոստանդեանը՝ տեղեկացնելով, որ իր նկատմամբ որեւէ յօդուած չի առաջադրուել:

Մ. Կոստանդեանը պաշտպան է վարձել:

«Սահմանադրության 5-6 կէտ է խախտուել: ՀՀ գլխավոր դատախազին նամակ ենք յանձնել ծառայողական քննություն անցկացնելու եւ քրէական գործ յարուցելու համար, -ասել է Մանուէլ Կոստանդեանը, -այս ամէն անօրինական է արուել, որովհետեւ քրէական գործ չի յարուցուել»:

Ձերբակալման պահին երիտասարդների մօտ եղել են էնվեր եւ թալեթ փաշաների նկարներով թուղթիկներ, որոնց վրայ գրուած է եղել. «Այսօր տեղի կ'ունենայ թալեթ եւ էնվեր փաշաների մահուան տարելիցը», իսկ ներքեւում՝ «Թոյլ չտանք, որ դա տեղի ունենայ»:

Ոստիկանությունում Մանուէլ Կոստանդեանն ասել է, որ թուրքերի հանդէպ թշնամանքը դեռեւս իր պայերից է եկել, իսկ ոստիկանությունն աշխատակիցներին ասել են, թէ ժամանակները փոխուել են. «Դու ներկայ գործընթացներին խանգարում ես»:

Մ. Կոստանդեանը պատմել է, որ իրեն թուղթ են տուել ստորագրելու, որ եթէ թուրքի սպանություն լինի, ինքը պատասխանատու է լինելու դրա համար: Կոստանդեանը չի ստորագրել այդ թղթի տակ:

Վանաձորի ոստիկանապետը հրաժարուել է պատասխանել կիրակի օրը ոստիկանության բաժանմունք այցելած լրագրողներին: Վերջիններին դուրս են հրաւիրել բաժանմունքից՝ ասելով, թէ այդ տեղն իրենց համար մամուլի ակումբ է:

«ՄԻԱՑՈՒՄ»-Ը ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՇՈՒՄՆԵՐՈՒ ՏԱԿ



Ձախէն աջ՝ Տիգրան Խզմալեան, Արմէն Եղեան եւ Ալեք Սնիգոմշեան մամուլի ասուլիս ընթացքին

«ԱՅՍՕՐ»-ը: «Միացում» ազգային նախաձեռնությունների կազմակերպչներ Տիգրան Խզմալեանը, Ալեք Սնիգոմշեանը եւ Արմէն Եղեանն Հոկտեմբեր 20-ի ասուլիսում ներկայացրեցին հայ-թուրքական Արձանագրությունների եւ Մադրիդեան սկզբունքների դէմ իրենց կազմակերպած ստորագրահաւաքի ընթացքը:

Նախաձեռնությունների անդամները նախքան հայ-թուրքական Արձանագրությունների ստորագրումը սկսել էին բողոքի ակցիա, որի ժամանակ «այրում էին արձանագրությունները» եւ իրականացնում էին ստորագրահաւաք՝ ընդդէմ հայ-

թուրքական յարաբերությունների: Ըստ բանախօսների, իշխանությունների յորդորներից յետոյ Արձանագրությունների «այրելու» գործընթացը դադարեցրել էին, սակայն երկու երկրների նախարարների կողմից Արձանագրությունները ստորագրելուց յետոյ ՀՀ իշխանությունները սկսել են ճնշումներ գործադրել եւ խանգարել ստորագրահաւաքների անցկացումը: Մասնավորապէս, անցած շաբաթ Նոր Նորքի զանգուածում, Ա. Եղեանի ներկայացմամբ, «մօտ 20 թափթիվներ փորձել էին

Շաբ.ը էջ 4

52,4 ՏՈԿՈՍԸ ԴԵՄ Է ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՏՈՐԱԳՐՄԱՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հայաստանի հասարակության գերակշիռ մասը դէմ է ոչ թէ հայ-թուրքական սահմանի բացմանը, այլ արձանագրությունների ստորագրման միջոցով դիւանագիտական յարաբերությունների հաստատմանը: Նման արդիւնք է ցոյց տուել Հայկական Սոցիոլոգիական Ասոցիացիայի նախագահ Գէորգ Պօղոսեանի նախաձեռնութեամբ 2009թ. Սեպտեմբերի 21-25-ը Երեւանում 1000 քաղաքացիների շրջանում արուած հարցումները:



Սոցիոլոգ Գէորգ Պօղոսեան

Ըստ դրանց՝ հարցուածների 52,4 տոկոսը դէմ է արձանագրությունների ստորագրմանը, իսկ 40 տոկոսը սահմանի բացմանը: Ի դէպ, թուրքիայում արուած հարցումների արդիւնքում թուրք հասարակությունն էլ է դէմ արտայայտուել յարաբերությունների բարելամանը:

«Խօսքը գնում է ոչ թէ սահմանների բացել, չբացելու մասին, այլ յարաբերություններ հիմնելու այդ արձանագրությունների հիման վրայ: Չասնեք, որ հայերը դէմ են սահմանը բացելուն: Ընդգծենք, որ Հայաստանը չի էլ փակել սահմանը, հետեւաբար մեր սահմանի բացելուն դէմ լինելը տարօրինակ կը լինէր», - ասաց Գէորգ Պօղոսեանը:

Ըստ սոցիոլոգի, թուրքերն իրենք իրենց հիմնաւորումներն ունեն դէմ արտայայտուելու, հայերն՝ իրենց: Բացի այդ. «Մինչեւ այսօր էլ համոզուած եմ, որ մեր քաղաքացիներից շատ շատերին պարզ չի, թէ ինչու ենք նման

զիջումների գնում: Ինչո՞ւ ենք թուղթ ստորագրում, որովհետեւ սահմանը փակելուց նրանք որեւէ թուղթ չեն ստորագրել»:

Լրագրողի հարցին, թէ անջրպետը յաղթահարելու ելքը որն է, նա պատասխանեց, թէ շատ հայերի համար այդ սահմանը միշտ էլ բաց է եղել, հիմա էլ է բաց: «Շատերի համար սահմանի բացուելը անհասկանալի է, որովհետեւ 30-40 հազար հայութիւն ամէն տարի գնում է թուրքիա եւ հանգստանում, գալիս: Ոչ մի խոչընդոտ չի լինում: Այլ հարց է, որ դիւանագիտական յարաբերություններ չունենալը չի է բացմաթիւ դժուարութիւններով. մի մարդ յանկարծ այնտեղ անձնագիրը կորցրեց, նրա վիճակը ինչ է լինելու», - նկատեց Գէորգ Պօղոսեանը:

Ի դէպ, սոցիոլոգը զարմացած է նաեւ, թէ իշխանութիւնները սկսելով այսպիսի մեծ քաղաքական ակցիա, ոչ մի հարցում չարեցին եւ այս մասարակութեան մասը կարծես թէ անտեսուեց:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒԵԼՈՒ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 10-ին Յիւրի-խում ստորագրուած հայ-թուրքական արձանագրությունները նախքան Ազգային ժողովում վաւերացուելը քննարկուելու են Հայաստանի սահմանադրական դատարանում, որտեղ վճռուելու է դրանց համապատասխանութիւնը Հայաստանի սահմանադրությանը: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտնեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Սամուէլ Ֆարմանեանը:

Մեկնաբանելով արձանագրությունների վաւերացման ընթացակարգը՝ Ֆարմանեանը նշեց, որ նախ ԱԳՆ-ի կողմից նախաձեռնուելու է ստորագրուած փաստաթղթերի միջգերատեսչական ընթացակարգ, ինչից յետոյ ԱԳՆ-ն փաստաթղթերն ուղարկելու է Հայաստանի նախագահին: «Երկրի ղեկավարը ստորագրուած արձանագրություններն ուղարկում է Սահմանադրական դատարան, քննարկելու դրանցում ամրագրուած պարտաւորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը հա-

մապատասխանութեան հարցը, եւ ՄԴ-ն քննարկելուց յետոյ որոշում է կայացնում արձանագրություններում ամրագրուած պարտաւորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանութեան հարցի վերաբերեալ», - ասաց Ֆարմանեանը եւ յաւելեց, որ ՄԴ-ն որոշումն ուղարկելու է նախագահին:

Համապատասխանութեան մասին որոշում կայացուելու պարագայում նախագահը փաստաթղթերն ուղարկելու է Ազգային ժողով՝ քննարկման եւ վաւերացման: Աժ-ում սահմանուած կարգով վաւերացուելուց յետոյ ԱԳՆ-ն կազմելու է արձանագրությունների վերաբերեալ վաւերագիր եւ ներկայացնելու է նախագահի ստորագրմանը: Վաւերագիրն ամրագրուելու է Հայաստանի Հանրապետութեան կնիքով եւ ՀՀ արտաքին գործերի նախարարի ստորագրութեամբ: «Աւարտական փուլում տեղի է ունենում վաւերագրերի փոխանակում, որից յետոյ դրանք մտնում են ուժի մէջ», - մանրամասնեց Սամուէլ Ֆարմանեանը:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԽՏՄԱՆ ԴԵՄ ՀԱՅՅՆ ԸՆԴՈՒՆՈՒԵԼ Է ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՈՅԹ

Ս.Թ. Հոկտեմբերի 16-ին «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնը Երեւանի կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարանից ծանուցում ստացաւ առ այն, որ «Արարատ» կենտրոնի հայցն ընդէմ «Կովկասեան ինստիտուտ» հիմնադրամի, դատարանում վարոյթ է ընդունուել (որոշումը կայացուել է ս.թ. Հոկտեմբերի 7-ին): Տեղեկացուել է նաեւ, որ դատական նիստի ժամանակի եւ վաչրի մասին պատշաճ ձեւով լրացուցիչ կը ծանուցուի, -այս մասին «Երբ»-ի հետ զրոյցում ասել է «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրէն Արմէն Ալվազեանը: Յիշեցնենք, որ «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնը դատական հայց էր ներկայացրել Ալեքսանդր Իսկանդարեանի դէմ Յեղասպանութեան փաստը կասկածի տակ ղնելու համար:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԸ ՅՈՐԴՈՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱԶԱՏՈՒԵԼ ՕԼԻԳԱՐԽԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ



Համաշխարհային Բանկի կառավարիչ-տնօրենը եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն քաջուճկը կատարեն Երեւանի մէջ ՀԲ գրասենեակի շէնքի

«Հայաստանի տնտեսութիւնն ունի օլիգոպոլ կառուցուածք, եւ մենք էլ հենց խօսում ենք դրա մասին, որ անհրաժեշտ է ինչ-որ բան անել», - Կիրակի, Հոկտեմբեր 18-ին հրաւիրած ասուլիսում յայտարարել է Համաշխարհային Բանկի (ՀԲ) կառավարիչ-տնօրէն Նգոզի Օկոնջո-Իվիլյան:

Նրա խօսքով, Հայաստանի տնտեսութիւնը կարիք ունի, որ այստեղ ծաւալուի աւելի լուրջ մրցակցութիւն. - «(Դուք) պէտք է ջանք չինայէք պայքարելու, որպէսզի տնտեսութիւնը չլինի օլիգոպոլ կառուցների գերին», - յայտարարեց տիկին Օկոնջո-Իվիլյան:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ հաշուի առնելով, որ Հայաստանի ղեկավարներից շատերը բաւականին հարուստ մարդիկ են եւ, կանգնած լինելով նշուած օլիգոպոլ կառուցուածքի ետեւում ու շահ ստանալով տնտեսական այդ կառուցուածքից, արդեօ՞ք նրանք անհրաժեշտ կամք կը դրսեւորեն՝ պայքարելու տնտեսութեան մոնոպոլիստական կառուցուածքի դէմ, Նգոզի Օկոնջո-Իվիլյան պատասխանեց. - «Կարծում եմ, սա մի հարց է, որի ուղղութեամբ հայ ժողովուրդը պէտք է աշխատի եւ ինքը լուծում գտնի: Բայց ակնյայտ է մի բան, որ ձեր բոլորի շահերից է բխում [տնտեսութեան մէջ] ունենալ աւելի շատ մրցակցութիւն, որովհետեւ տնտեսական այսօրուայ մոդելով ձեր հնարաւորութիւնները ինչ-

որ սահմանից չեն կարող դուրս գալ, եւ այսքանից աւելի չէք կարող առաջ գնալ: Այսօր դուք ցածր-միջին եկամուտներով պետութիւն էք, եւ եթէ ցանկանում էք դառնալ բարձր-միջին կամ միջինից բարձր եկամուտներ ունեցող պետութիւն, ապա պէտք է ընդհանրապէս փոխէք տնտեսութեան գործող կառուցուածքը: Պէտք է բոլորին պարզ լինի, որ եթէ դա անէք, դրանից բոլորը կը շահն, եւ այնքան ժամանակ, քանի դեռ դա չէք անի, դրանից բոլորը կը տուժեն»:

Անդրադառնալով նաեւ ճգնաժամի հետեւանքով Հայաստանի տնտեսութեան մէջ ի յայտ եկած խոցելի տեղերին՝ Համաշխարհային Բանկի կառավարիչ-տնօրէնը առանձնացրեց տնտեսութեան դիւրեւսփիկացման հարցը. - «Ակնյայտ է, որ անհրաժեշտ է [Հայաստանի] տնտեսութիւնը բազմազանեցնել: Ապագայի համար պարզ է, որ եթէ Հայաստանը նպատակ ունի դուրս գալ ճգնաժամից եւ տնտեսական աճ ապահովել, ապա պէտք է կարողանայ որոշ մարտահրաւէրներ յաղթահարել»:

Նգոզի Օկոնջո-Իվիլյանի շաբաթ եւ կիրակի օրերին ընդունել են նախագահ Սերժ Սարգսեանը եւ վարչապետ Տիգրան Սարգսեանը: Կառավարութեան ղեկավարի հետ Օկոնջո-Իվիլյան ներկայ է եղել Համաշխարհային բանկի երեւանեան նոր գրասենեակի բացման արարողութեանը:

ԹՈՒՐԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ

Շարունակուած էջ 1-էն

կան հողը սուրբ է մեզ համար ինչպէս մեր սեփականը, եւ այդ հողը գրաւուածէն ազատագրելը մեր առաջնահերթ ազգային խնդիրներէն է»:

«Նոյնիսկ եթէ երկիրքը փուլ գալ թուրքիոյ դիրքորոշումը չի փոխուիր: Մեր քաղաքականութիւնը գրաւումին վերջ տալու հարցով կը շարունակուի մինչեւ հարցի լուծումը», - «Ֆրանսիերեն» գործակալութեան համաձայն ըսած է Դավութօղլու:

Միւս կողմէ, թուրքիոյ մէջ որոշ շրջանակներ կը մեղադրեն

վարչապետ Ռեջեբ էրդողանը թուրք-ատրպէյճանական յարաբերութիւնները փճացնելու համար: «Հանրապետական ժողովրդական» ընդդիմադիր կուսակցութեան ներկայացուցիչները յայտարարած են, թէ հայ-թրքական յարաբերութիւնները կարգաւորելու ընթացքին Անգարա պէտք եղածի պէս հաշուի չէ առած Ատրպէյճանի կարծիքը: «Մեր կառավարութիւնը այսօր հրաժարեցաւ այն քաղաքականութենէն, որով կ'ընթանար 17 տարի: Եթէ այսպէս շարունակուի, եղբայրական յարաբերութիւնները յօդս կը ցնդին», - յայտարարած են անոնք:

ԷԼՄԱՐ ՄԱՍԵՂՅԱՐՈՎ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ ՀԱՐՑԵՐ Է ԲԱՐՁՐԱՑՐԵԼ, ՈՐՈՆՔ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՈՒԵԼ ԷԻՆ ԵՐԿՈՒ-ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՌԱՋ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: «Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ վերջին՝ Հոկտեմբերի 9-ին Քիշինեւում կայացած հանդիպումը լաւատեսութեան առիթ չի տալիս», - ըստ ադրբեջանական Trend գործակալութեան, յայտարարել է Ատրպէյճանի արտգործնախարար էլմար Մամեդբարովը՝ ընդգծելով, որ բանակցութիւնները կառուցողական չեն եղել:

«Հայկական կողմը յանկարծ սկսեց հարցեր բարձրացնել, որոնք համաձայնեցուել էին դեռեւս երկու-երեք տարի առաջ», - յայտարարել է Մամեդբարովը:

«Մենք ընդունում ենք սկզբունքը, որի համաձայն, քանի դեռ ամէն ինչ չի համաձայնեցուել՝ չի համաձայնեցուել ոչինչ, սակայն անհնար է առաջ շարժուել, երբ ստիպուած ես վերադառնալ եւ քննարկել հարցեր, որոնց շուրջ պայմանաւորուածութիւններ էին ձեռք բերուել դեռեւս երկու-երեք տարի առաջ», - յաւելել է Ադրբեջանի արտգործնախարարը:

Կարծիք յայտնելով, թէ հայկական կողմի այդ դիրքորոշումը

պայմանաւորուած է տարածաշրջանում արձանագրուած վերջին զարգացումներով, մասնաւորապէս, հայ-թուրքական հաշտեցմամբ Մամեդբարովն ասել է. - «Հայկական կողմը հաւանաբար կարծում է, որ եթէ թուրքիայի հետ բանակցութիւնները առաջ են շարժուում, ապա հնարաւոր է սառեցնել միւս գործընթացները»:

Ատրպէյճանի արտգործնախարարը նաեւ յայտնել է, թէ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահները, ամենայն հաւանականութեամբ, Հոկտեմբերի վերջին կամ Հոյեմբերի սկզբին այցելելու են տարածաշրջան:

«Նրանք պէտք է մտորեն այն ամէնի շուրջ, ինչ լսեցին Քիշինեւում, ուղիներ գտնեն՝ բանակցային գործընթացի դրական դինամիկան պահպանելու համար եւ, որ ամենակարեւորն է՝ համոզեն Հայաստանի իշխանութիւններին, որ նրանք չեն կարող հարցեր բարձրացնել, որոնք արդէն համաձայնեցուել են: Հակառակ դէպքում, սա կը լինի անվերջ գործընթաց», - ասել է Ադրբեջանի արտգործնախարարը:

ՍԿՍԱԻ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 1-էն

թիւններէն ետք Փաշինեան կը գտնուէր հետախուզման մէջ եւ իրաւապահ մարմիններուն ներկայացաւ այս տարուայ Յուլիս 1-ին: Յունիս 19-ին Ազգային ժողովի ընդունած համաներման մասին որոշումը Նիկոլ Փաշինեանի նկատմամբ չկիրառուեցաւ:

Դատական նիստի առթիւ, դատարանի շէնքի մօտ հաւաքուած տասնեակ մարդիկ կը պահանջէին անյապաղ ազատ արձակել Փաշինեանին: Դատարանի շէնքը շրջապատուած էր ոստիկաններով, որոնք ցուցարարներուն թոյլ չէին տար մօտենալ շէնքի մուտքին:

Դատարան եկած էին նախկին քաղաքական բանտարկեալներ ու վերջերս ազատ արձակուած ընդդիմադիր գործիչներ եւ Հայ Ազգային Գոնկրէսի ներկայացուցիչներ:

«ՄԻԱՑՈՒՄ»-Ը ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՇՈՒՄՆԵՐՈՒ ՏԱԿ

Շարունակուած էջ 3-էն

պրովոկացիա իրականացնել, որին իրենք չեն տրուել:

Ա. Եղեանը վստահութիւն չայտնեց, որ եթէ շարունակեն ստորագրահաւաքը, ապա իշխանութիւնների կողմից ճնշումները նոյնպէս կը շարունակուեն:

Երեւանի տարբեր համայնքներում մէկ կէտով 10 օր իրականացրած ստորագրահաւաքի արդիւնքում «Միացում» ազգային նախաձեռնութիւնը հաւաքել է շուրջ 9500 ստորագրութիւն:

Տ. Խզմալեանի համոզմամբ, «քաղաքականապէս ակտիւ անձանց

Հայ Ազգային Գոնկրէսի նույն օրը տարածած յայտարարութեան մէջ մասնաւորապէս, ըսուած էր. - «Ինչպէս բոլոր քաղաքապետարկեալների, այնպէս էլ Նիկոլ Փաշինեանի դէմ վարչախումբը յարուցել է բացարձակ անհիմն ու շինծու մեղադրանքներ՝ հերթական անգամ փորձելով կոծկել Մարտի 1-ին կազմակերպուած ոճրագործութիւնը»:

«Քաղաքական բանտարկեալներու եւ հալածեալներու պաշտպանութեան կոմիտէն» եւս դատարանի մօտ ստորագրահաւաք կազմակերպած էր: Յետոյ անոնք այցելեցին Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու դեսպանատուները, փոխանցելու համար այդ երկիրներու նախագահներուն ուղղուած բաց նամակ, պահանջելով որ, անոնք ստիպեն Հայաստանի իշխանութիւններուն՝ յարգել սեփական քաղաքացիներու իրաւունքները:

հալածանքները, ակնյայտօրէն, յատուկ ծառայութիւնների» իրականացրած գործողութիւններն են, եւ դա Արձանագրութիւններում առկայ «ազգայնական տրամադրութիւնները ճնշելու» պահանջի շրջնակներում է արւուած:

«Քաղաքապետարկեալների կոմիտէ»-ի անունից, որի անդամ է Տ. Խզմալեանը, նա յայտարարեց, որ հայ-թուրքական յարաբերութիւնների առնչութեամբ ճնշումների ենթարկուած անձանց համարելու են «քաղաքացիներ» եւ պաշտպանելու են, ինչպէս պաշտպանում են «քաղաքապետարկեալներին»:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

ՎԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԳՈՒՐԳԷՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ:

ՀՀ «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ» ՊԱՏՐԱՍ ԶԷ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ

ՀԵՂԻՆԷՄԱՆՈՒԿԵԱՆ

Դատելով հայ-թուրքական սահմանի բացման մասին երազող հայրենի իշխանութիւնների շահագրգռութիւնից եւ այդպիսով երկիրը շրջափակումից դուրս բերելու նրանց մարդասիրական մղումներից՝ կարելի է ենթադրել, որ վերջիններս, հարկաւ, բոլոր հնարաւոր միջոցներով երկիրը նախապատրաստել են սահմանի բացման հետ ի յայտ եկող հաւանական հետեւանքներին (թմրանիւթերի, յանցագործների ներհոսք, մաքսանենգութիւն, քրդական ահաբեկչութիւն եւ այլն) ու մշակել դրանց հակազդելու, դիմակայելու մեթոդներ:



ՄԴՀԿ կենտրոնի անդամ, ԱԱԾ նախկին փոխնախարար Գուրգէն Եղիազարեան

Վերոնշեալ թեմայի շուրջ մեր գրողակիցը ՄԴՀԿ համահնչակեան կենտրոնական վարչութեան անդամ, ԱԱԾ նախկին փոխնախարար Գուրգէն Եղիազարեանն է, ով, ի դէպ, «մեծագոյն բլէֆ» է համարում մօտ ապագայում սահմանի բացման մասին խօսակցութիւնները:

- Որպէս նախկին ԱԱԾ պաշտօնեայ, ի՞նչ էք կարծում, մեր երկիրը պատրաստ է հայ-թուրքական սահմանի բացմանը:

- Ոչ, իհարկէ: Մինչ անվտանգութեան խնդիրներին անցնելը, ասեմ, որ մեր երկիրը ոչ միայն յատուկ ծառայութիւնների գծով պատրաստ է թուրքիայի հետ սահմանի բացմանը, այլ նաեւ չունի համապատասխան օրէնսդրական դաշտ: Պատկերացրէք, հօր մի պետութիւն՝ թուրքիան, բացում է սահմանը այսօր տկար Հայաստանի առաջ: Այն հեքիաթները, որոնք պարբերաբար հիւսուում են իշխանութիւնների կողմից, թէ այդպիսով օլիգարխներ չեն լինի՝ ուղղակի ծիծաղելի են: Նման տկարամիտներին բացատրեմ, որ այսօր մեր երկիրն ունի բաց սահմաններ Վրաստանի եւ Պարսկաստանի հետ, եւ օլիգարխները կան եւ լինելու են նաեւ թուրքիայի հետ սահմանի բացումից յետոյ: Օլիգարխների լինելիութիւնը ՀՀ-ում բնութագրւում է ընդամէնը աւագակապետական մտեցումներով, եւ աւագակապե-

տները, բնականաբար, պէտք է ունենան օլիգարխներ եւ մոնոպոլիստներ: Այսինքն՝ մոնոպոլիստական կապիտալիզմն է, որ ծնում է օլիգարխներին: Չկայ մոնոպոլիստական կապիտալիզմ՝ չկան օլիգարխներ: Եւ եթէ իշխանութիւններն ուզում են վերացնել օլիգարխիան, ապա դրա համար սահման բացել պէտք է, ընդամէնը բարի կամք է պէտք ու մէկ օրում դրանք չեն լինի: Ինչ վերաբերում է սահմանի բացմանը՝ ազգային անվտանգութեան տեսանկիւնից, մենք ընդհանրապէս այդ ուղղութեամբ նախապատրաստուած չենք: Թէեւ ունենք այդ ոլորտի լաւագոյն մասնագէտներ, կադրային լաւագոյն բազա, եւ մեր սպաները կարող են դիմակայել ցանկացած վտանգի՝ կապուած հակահետախուզութեան հետ: Բայց մեր հակահետախուզութեան բիւջէն խիստ սահմանափակ է, եւ այդ բիւջէն չի բաւականացնի յատկապէս թուրքիայի հետ բաց սահմանների պայմաններում: Մեր այսօրուայ խղճուկ տնտեսութիւնը չի կարող այնպիսի միջոցներ տրամադրել մեր անվտանգութեան ծառայութեանը, որպէսզի վերջինս կարողանայ յաւուր պատշաճի դիմակայել Եւրոպայի լաւագոյն հետախուզութիւններից մէկին, ինչպիսին թուրքականն է:

Եւ ես տարակուսում եմ, թէ ինչպէ՞ս ենք կարողանալու դիմակայել հնարաւոր ահաբեկչութիւններին, յատկապէս, մեր խնդիրների խնդիր ատոմակայանի հարցում: Եթէ, Աստուած մի արասցէ, ատոմակայանի հետ մի բան պատահի, ապա մենք կը գրկուենք Արարատեան դաշտավայրից, իսկ դրանից գրկուելու պարագայում մենք կը գրկուենք Հայաստանից ընդհանրապէս: Այդ մասին լուրջ մտածել ու մտահոգուել է պէտք:

- Այդ դեպքում, ո՞րն է ելքը. պէտք է դադար տրուի հայ-թուրքական յարաբերութիւնների հաստատմանը՝ երկիրը պատրաստ վիճակի բերելու համար:

- Պետք է մի քանի տասնեակ անգամ մեծանայ ազգային անվտանգութեան ծառայութեանը յատկացուող բիւջէն, մի քանի անգամ բարձրանայ ԱԱԾ աշխատակիցների աշխատավարձը: Նրանք այսօր ծիծաղելի աշխատավարձ են ստանում եւ հացի խնդիր ունեն: Նաեւ մի կարեւոր հանգամանք. վերջին մի քանի տարիներին իշխանութիւնները ազգային անվտանգութեանը ներքաշել են քաղաքական խնդիրների մէջ, եւ դա, իմ դիտարկմամբ, մեծագոյն ապուշուութիւն է եւ պէտք է այսուհետ բացառել նման երեւոյթը: Մինչեւ հիմա միխիմալ պայմաններում մեր երկրի ազգային անվտանգութեանն առնչուող խնդիրները հնարաւոր է եղել լուծել, քանի որ Հայաստանը չի եղել տարանցիկ երկիր, եւ շատ բարդագոյն խնդիրների կողքից մենք ուղղակի անցել ենք: Սակայն թուրքիայի հետ սահ-

մանը բացելուց յետոյ մի լրջագոյն խնդիր է ծառայաւոր ՀՀ յատուկ ծառայութիւնների առաջ՝ դա տեխնիկական յագեցածութեան ոչ բաւարար լինելն է: Եթէ դուք գիշերուալ ժամերին նայէք Արարատի լանջին՝ երկու լոյս կտեսնէք, դրանք յատուկ կայաններ են, որոնք ժամանակին ուղղուած էին Սովետի դէմ: Եւ այսօր այդ կայանները օգտագործուած են՝ լսելու մեր երկրի ցանկացած խօսակցութիւն, նոյնիսկ կառավարական շէնքերում ընթացող խօսակցութիւնները: Իսկ մենք նման տեխնիկական յագեցումածութիւն չունենք, եւ մեր յատուկ ծառայութիւնները տեխնիկապէս ամբողջովին թարմացուելու, նորացուելու կարիք ունեն: Բացի այդ՝ նաեւ ՀՀ անվտանգութեան աշխատակիցների համար պէտք է յատուկ բարձրագոյն դասընթացներ կազմակերպուեն: Նոյն ոստիկանութեան ակադեմիային կից պէտք է ստեղծել առանձին ֆակուլտետ, որտեղ կը պատրաստուեն ԱԱԾ մասնագէտներ, իսկ ատեստաւորուած սպայական կազմի համար՝ վերապատրաստման կուրսեր կ'անցկացուեն: Այսինքն՝ բազում են միջոցառումները, որոնք պէտք է սահմանի հնարաւոր բացմանը զուգահեռ իրականացուեն, բայց այս ամէնը պէտք է նախապէս արուէր, որպէսզի երկիրը պատրաստ լինէր դիմակայել սահմանի բացման հետ ի յայտ եկող հնարաւոր բոլոր մարտահրաւէրներին եւ ոչ թէ այսպիսի անպատրաստ վիճակում մտնէր խիստ պրոբլեմատիկ մի պրոցէսի մէջ:

ԲՈՂՈՔԻ ՀԱՒԱՔ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

14 Հոկտեմբեր 2009-ի իրիկունը, ՄԴՀԿ-ի, ՀՅԴ-ի, եւ ՌԱԿ-ի Կիպրոսի մարմիններու հրաւերով կիպրահայութիւնը հաւաքուեցաւ Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցին բակը՝ Եղեռնի յուշակոթողին առջեւ, իր բողոքի ձայնը բարձրացնելու Հայաստան-թուրքիա արձանագրութիւններու ստորագրման դէմ:

Երեք կուսակցութիւններու անունով երեկոն բացաւ Յակոբ Գազանճեան, որ անդրադառնալով տիրահաւաք արձանագրութիւններու ստորագրման, կոչ ուղղեց ժողովուրդին ըլլալ միակամ, ու տէր կանգնիլ տասնամեակներէ ի վեր քաղաքական կուսակցութիւններու հետեւողական աշխատանքով ձեռք բերուած արդիւնքներուն: «Ինչպէ՞ս կարելի է, որ ժողովուրդին կրած ցեղասպանութիւնը բանակցութիւններու սակարկութեան առարկայ դառնայ եւ կամ պատմագէտները քննարկման են թակայ՝ երբ ան համամարդկային ճանաչում գտած եղելութիւն է արդէն», ըսաւ ան իր խօսքին մէջ:

Ապա, Կիպրահայ կազմակերպութիւններու Բաց Նամակը կարդաց, ընկ. Սերժ Կարապետեան որ անցեալ շաբաթ դրկուած էր Սերժ Սարգսեանին:

Վերջաւորութեան խօսք առաւ Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոս, որ ըսաւ. «Մեր դարաւոր երազն էր ունենալ ազատ եւ անկախ եւ ամբողջական Հայաստան: Այդ երազի ճամբուն



Ընկ. Սերժ Կարապետեան

վրայ բիւրաւոր եւ բիւրաւոր նահատակներ ինկան, բայց երազը մնաց, իղձը մնաց, տենչը մնաց:

«Այսօր իրականացած է մեր երազը: Ունինք անկախ հայրենիք: Մեր երազը եւ տենչը պիտի ըլլան, այսուհետեւ ունենալ զօրաւոր Հայրենիք՝ պատմական իրաւացի սահմաններով: Պէտք է ունենալ առողջ ու օրինակելի Հայրենիք: Այդ ուղղութեամբ պիտի շարժին հայոց պետականութիւնը, եկեղեցին եւ ազգային բոլոր կառույցները՝ ամբողջական հայութեամբ»:

Կիպրահայութեան բողոքի հաւաքը փակուեցաւ «Սարդարապատ» եւ «Ջարթի՛ր Լաօ» երգերու ժողովրդային երգեցողութեամբ:

Advertisement for MASSIS Weekly subscription. Includes text: 'MASSIS ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ', 'Yes, I wish to subscribe to Massis Weekly', 'Enclosed a check for (one year)', '\* \$50,00 for USA', '\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.', '\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.', and fields for Name, Address, City, State, Zip Code, Country, Tel, Fax.

ԱԶԳԱՅԻՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

... Շարադրուող պատմութեան հեղինակը նշանաւոր պատմաբան, գրող Բագրատ Ուլուրաբեանն է:

Ճշմարիտ հայրենասէր, դարաբաղցի գիտնականն իր ամբողջ կեանքը պայմարել է Ղարաբաղի ազատագրութեան համար:

Այն դժնդակ տարիներին, անգամ Մտալիմի մահուանից յետոյ, անհնարին էր որեւէ ազգային հարց բարձրացնել «եղբայրական» ժողովուրդների ձուլարանում:

Ղարաբաղի հարցը խորհրդային երկրի վերին ատեաններում լսելի դարձնելու համար, Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի մի քանի պատմաբաններ, այդ թւում հայրս՝ Յակոբ Անասեանն ու նրանից շատ աւելի երիտասարդ, Ղարաբաղից Հայաստան տեղափոխուած երիտասարդ գիտնական Բագրատ Ուլուրաբեանը մեր քննարկում անց էին կացնում գաղտնի ժողովներ:

Ես, եղբայրս եւ մայրս լոնլեյսյն հասկանում էինք, որ մեր ներկայութիւնն այդ օրերին ցանկալի չէր «նիստի» մասնակիցների համար, ուստի եւ, իւրաքանչիւրս աշխատում էինք տնից հեռանալ: Սակայն ես, անգուսպ հետաքրքրութիւնից դրդուած, շատ անգամ թափում էի «ժողովասրահին» կից փոփրիկ սենեակում, որտեղից կցկտուր ականջիս էին հասնում «եյոյթ ունեցողների» որոշ բառեր, որոնց մէջ գերիշխող էր Ղարաբաղ անունը:

Որոշ ժամանակ անց, դադարեցին մեր տան հաւաքները: Նկատու էի, որ հայրիկս աւելի ինքնամիտ ու լուսկեաց էր դարձել:

Վերջապէս, տարիներ անց հայրս բացեց գաղտնիքը:

Բագրատ Ուլուրաբեանը, որ երկար տարիներ աշխատել էր Ղարաբաղում, եղել էր տեղի Գրողների Միութեան նախագահ եւ «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր, մօտիկից գիտէր, տեղեակ էր թէ ինչպէս էր հարստահարուած տեղի հայ բնակչութիւնը:

Հայաստան տեղափոխուելուց յետոյ, զգալով իրեն ապահով ծայրում, Ուլուրաբեանը փորձում է պատմաբանների շրջանակում համախոհներ գտնել՝ պայմար ծաւալելու Ղարաբաղը իր օրինական տիրոջը՝ Հայաստանին վերադարձնելու համար:

Եւ այսպէս, հայրիկիս օգնութեամբ, նա մի քանի պատմաբան-մտաւորականների օգնութեամբ, փորձում է փաստացի, գիտական տուեալներով խորհրդային իշխանութիւնների ու շարժումների ներքին Ղարաբաղի՝ որպէս Հայաստանից բռնագրաւուած տարածքի վրայ:

Մեր տան ժողովների արդիւնքում ձեւակերպու է համապատասխան նամակ եւ մի քանի ստորագրութիւններով ուղարկում խորհրդային երկրի նախագահ Բրեժնեւիին:

Որոշ ժամանակ անց, նամակի տակ ստորագրողները մէկ առ մէկ կանչու էին KGB եւ համապատասխան գրոյցից յետոյ, հասկանալի պատմաւորներով, խոստանում են երբեւէ չ'անդրադառնալ Ղարաբաղի թեմային:

Տեսնելով որ Հայաստանում Ղարաբաղի հարցը անհնարին է քննարկման առարկայ դարձնել, Բագրատ Ուլուրաբեանը որոշում է դիմել Սփիւռքի օգնութեանը:

Այդ նպատակի համար, նա Ղարաբաղի հայութեան վիճակը նկարագրող ցնցող փաստերով լի մի յօդուած է պատրաստում եւ հայրիկիս օգնութեամբ փորձում այն տարածել Սփիւռքում:

Հայրիկիս՝ Յակոբ Անասեանի անձնական գրութիւնները ուսումնասիրելիս, ձեռքս անցաւ Բագրատ Ուլուրաբեանի այդ յօդուածի կրկնօրինակը, որ առաջին էջի վերեւում ձեռագրով գրուած է. «Գրեց՝ Բագրատ Ուլուրաբեան, Յակոբ Անասեանի միջոցաւ»: Յաջորդ նախադասութիւնն է. «1972 Օգոստոսին հետս բերի եւ լոյս տեսաւ «Արմէնիայի» եւ «Հայրենիք» մէջ»:

Լուսանցքի վրայ էլ գրուած է. «Հաւանաբար Սեպտեմբերին, Հոկտեմբերին Հայաստանէն հետս բերի»:

Ինքնին հասկանալի է, որ այսօր տարիներ յետոյ դժուար է բացայայտել այդ նշանաւոր հայորդու ինքնութիւնը, մանաւանդ որ ինքը՝ Ուլուրաբեանի յօդուածը փոխանցողի դերում է հանդէս եկել, իսկ հայրիկս էլ ոչինչ չի ասել ինձ այդ յօդուածի, եւ «փոստատարի» դերն ստանձնած անյայտ մտաւորականի մասին:

70-ական թուականներից սկսեալ մեր տանը յանախ եւն հիւրընկալուել սփիւռքահայ բազմաթիւ մտաւորականներ, այնպէս որ, ես դժուարանում եմ տալ որեւէ մէկի անունը, եւ, քանի որ Ուլուրաբեանի յօդուածը լոյս է տեսել Միացեալ Նահանգներում, պիտի ենթադրել որ հայրիկիս միջոցով Ուլուրաբեանի յօդուածը փոխանցուել է ամերիկահայ մտաւորականի միջոցով:

Ամէն պարագայի, այսօրուայ համար բաւական շահեկան կարող է դիտուել Բագրատ Ուլուրաբեանի յօդուածը, որը նոյնութեամբ ներկայացնում ենք ընթացողների ու շարժումների:

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒՐԱԲԵԱՆ

... Արցախ, Փոքր Սիւնիք, Լեռնային Ղարաբաղ: Հին ու հնաւանդ անուններ, հայ հող, Հայաստան: Բայց եղաւ այնպէս, որ այդ հայ հողը պոկեցին, կտրեցին Մայր Հայաստանից:

Դա մի անարդարութիւն էր, կատարուեց արդարութեան չափ-թանակից յետոյ... Այսուհանդերձ, յոյս կար, մարդիկ հաւատում էին, որ անջատուած մասնիկը, հայ Ղարաբաղը երբեք կը միանայ ամբողջովին, իր Մայր Հայաստանին: Յոյս կար եւ յուսալով էլ սպասում էր Ղարաբաղցին:

Շատ դժանդութիւններ եղան Ղարաբաղցի հայից այդ յոյսը խլելու համար:

Երբ Ատրպէյճանական հանրապետութեան ղեկն ու իրաւունքը դժնաչիշատակ Բաղիրովի ձեռքին էր, Ղարաբաղցին նոյնիսկ չէր կարող ասել, որ ինքը հայ է, Հայաստան աշխարհի որդի: Այդպիսի ամէն մի հայ դատապարտուած էր հրապարակով: Նրա ճակատին խարանուած էին ՆԱՅԻՈՒԱԼԻՍ Բառը եւ տանում այնտեղ, որտեղից վերադարձը հրաշքով կարող էր լինել:

Ղարաբաղի այս վիճակը մի բաց երախ էր դարձել, որ կուէր տալիս բոլոր նրանց, ովքեր արդա-

րացիօրէն չէին ուզում այդ արհեստական բաժանումը...

Երկար սպասումներից յետոյ, եկան աւելի բարեյաջող օրեր:

Մթնոլորտը թեթեւացաւ, ահա վերացաւ, մարդկանց կուրծքը ճնշող ծանրութիւնը կարծես այլեւս չկար:

Ղարաբաղցին սկսեց իրեն աւելի ամուր զգալ պապենական հողի վրայ, սկսեց աւելի ազատ մտածել, աւելի ազատ արտայայտել իր իդէները Մայր Հայաստանի նկատմամբ: Գնալ-գալը շատացաւ, հեշտացաւ: Նա այլեւս վտանգ չունէր իր հայ լինելը, իր ազգային արժանապատուութիւնը ցոյց տալուց: Համարձակուեց նաեւ օրինական պահանջներ ներկայացնել:

Լեռնային Ղարաբաղի մարզային կենտրոնը՝ Ստեփանակերտը, որ տարիներ շարունակ հողին էր կպել ու հողից վեր բարձրանալու ուժ ու հնարաւորութիւն չունէր, միանգամից բացեց թեւերը, կառուցման շունչ ու թափ առաւ, ծաւալուեց, մեծացաւ, գեղեցկացաւ:

Եւ այստեղ էլ հաւաքուեցին, կենտրոնացան, աճեցին մտաւորականներ, որոնք կարող էին մարզի հայութեան անունից խօսել, ներկայացնել նրա խոհերն ու պահանջները:

Լեռնային Ղարաբաղը արդէն ունէր իր գրողները, դերասանները,

ըր, երգիչները, իր գիտնականները, մշակույթի օճախները: Ազգային կեանքը մի տեսակ աշխոյժացաւ, վերելք ապրեց: Սակայն եւ այնպէս, մարզի հայութիւնը դժգոհ էր իր վիճակից, որովհետեւ այդպէս էլ մնում էր հատուած, բաժանուած Մայր Հայաստանից:

Այս բանը զգում էին Ատրպէյճանի նոր ղեկավարները, որոնք չէին ազատուել ու չէին էլ ուզում ազատուել իրենց նախորդների մտայնութիւնից ու չար ծրագրերից: Նրանք զգում էին, որ փոխուել են ժամանակները, եւ իրենց հայահալած քաղաքականութեան դէմ բողոքողներին այլեւս չէին կարող բանտ ու քարտէքել:

Ուրեմն, պէտք էր ուրիշ կերպ գործել, հին «մեղաւորներին» վնասագրեծերու նոր եղանակներ գտնել:

Գտան այդ եղանակները: Սոփորական դարձան աշխատանքից հեռացնելու, կուսակցական տոյժ ու պատիժ տալու փաստերը: Իսկ մարզի հանդէպ տնտեսական այնպիսի ճնշումներ գործադրուեցին, որ մարդիկ սկսեցին երանի տալ Բաղիրովի ժամանակներին:

Չ'ուշացան նաեւ ատրպէյճանական ազգամոլութեան գաղափարախօսները: Նրանք իրենց մամուլն ու գրքերը լցրեցին ամենաբազմազան անհեթեթութիւններով, որոնցից մէկի համաձայն, Ղարա-

բաղի հայերը խեղճ եկուորներ են համարուում իրենց հողի վրայ: Միւսի կարծիքով, նոյն այդ հայերը ոչ թէ իսկական հայեր են, այլ բռնութեամբ հայացուած աղուաններ կամ թուրքեր:

Իսկ մի երրորդը Ղարաբաղի, այսպէս կոչուած, ինքնավարութեան 40-ամեակը «ողջունեց» հետեւեալ բարբառով:

«Եղել է Շուշին, եղել է Աղդաձոր, բայց նրանց միջեւ ընկած Ստեփանակերտ քաղաքը չի եղել»:

Իբր հայկականը 40 տարուայ ընթացքին է, որ ընկել է ատրպէյճանական երկու քաղաքների արանքը: Շուշուայ փառայեղ մասը, որ հայկական է եղել, կործանել են 1920 թուականին, վերջերս էլ աւերակներն են ջնջել գետնի երեսից, որպէսզի չարագործութիւնը վկայող ոչինչ մնայ:

Հիմա էլ, օրը ցերեկով կոչ են անում վերացնելու Շուշուայ հայկական գերեզմանոցները:

Եւ այսպէս, սկսուել է մի նոր արշաւ Ղարաբաղի հայութեան դէմ՝ սկզբում զգուշաւոր, իսկ յետոյ՝ բացառապէս սանձարձակ: Սկզբում խօսում էին միայն, յետոյ սկսեցին գործել:

Հրազնով, խուլիզանի դանակով եւ մահացու այլեւայլ մի-

Շարք էջ 17

Advertisement for Anthem Blue Cross insurance. Includes text: AUTHORIZED INDEPENDENT AGENT, Anthem Blue Cross, CA LIC.#0494056 • BMaronian@AOL.com, FAX 500-9308, ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway, Glendale, CA 91205. Also features a cartoon illustration of a man in a suit.

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԿԱՐԱԳՐԻ ԿԵՐՏՄԱՆ ՃԱՄԲՈՒՆ՝ ՈՂՋՈՒՆԵԼԻ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁՔԸ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

2008 տարեշրջանի Նոյեմբերի վերջին Կիրակին՝ ներկայ գտնուած էինք իւրայատուկ ձեռնարկի մը, որ իրեն կը վերապահէր գերազանցապէս գնահատելի առաքելութիւն մը, որուն ծնունդը կուտար «ՀԲԸ Միութեան Երուանդ Պապայեան Մանկավարժական Նորակազմ Հիմնարկ»ը: Համանուն այս Կրթական օճախի առաջադրած ծրագիրը միանշանակ էր, ինչպէս ցոյց կու տար անոր անուանակոչումը, «Ազգանուիրում»:



տել տիպար հայեր, որոնք հաւատարիմ մնան իրենց ազգային ինքնութեան, սիրեն իրենց մշակութիւնը, լեզուն, ազգը, եկեղեցին: Ունենան ազգային պատասխանատուութեան բարձր գիտակցութիւն, յարգեն եւ պահպանեն մեր ազգային ժառանգութիւններն ու անհատականները: Ըլլան ուժեղ, վեհանձն, արդար եւ գիտակից առաջնորդներ: Հիմնարկը կը հաւատար, որ մեր ազգային նկարագրի այդ անվիճելի յատկութիւններն էին, որոնք պահած էին մեր ժողովուրդը դարեր ու դարեր, ու ներկայիս ալ կը մնային մեր գոյութեան պահպանման հիմնական երաշխիքները:

Այդ օր, խանդավառ մթնոլորտի մէջ, ներկայացուած էին յատուկ նշանակուած մենթորներ, որոնք նախաձեռնութիւնը պիտի վերցնէին, իրենց առաջնորդութեան յանձնուած մէնթորներուն (աշակերտներուն) ջամբելու հայեցի դաստիարակութիւն, ասպետական ոգի:

Որքան հրապուրիչ բաց նոյնքան չաւանդոտ եւ անիրագործելի կը թուէր ըլլալ «Ազգանուիրում» ծրագիրը, մասնաւորաբար մեր հեշտասէր Սփիւռքեան դժուարին այս ամիսներուն: Շատ անգամներ, ծնունդ առած են նման գրաւիչ ծրագիրներ, բայց շուտով մարած են: Արդարեւ, որքան ալ կասկածելի նկատուէին մոնիթորական ծրագրի յաջողութեան կարելիութիւնները, այնուամենայնիւ, իր ունեցած ազգային բարձր ձգտումով՝ հպարտութիւն առթող ձեռնարկ մը ըլլալէ չի դադարեցաւ մեզի համար. հիմնականը սկսիլն էր, եւ «Ազգանուիրում»ը սկսած էր: Սրահն բաժնուէր էինք մեր արտասանած յաջողութեան բարեմաղթութիւններով:

Յաջող դէպքերը շուրջապալ

շուտով վերակազմակերպուելու համար:

Ողջունեցինք «Ազգանուիրում»ի ազգային ինքնութեան եւ նկարագրի կերտման առաջին հունձքի հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ Կիրակի, Հոկտեմբեր 19, կ.վ. ժամը 3.30-ին, շրջանաւարտներու ծնողներու, «Երուանդ Պապայեան Մանկավարժական Հիմնարկ»ի բարեկամներու հոծ բազմութեան եւ հոգեւոր դասու ներկայութեամբ:

Հանդիսութիւնը կը վայելէր հովանաւորութիւնը թեմիս Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի, որուն բացակայութեան, գինք կը ներկայացնէր առաջնորդական

փոխանորդ հոգւ. Տ. Տաճատ Ծ. վրդ. Եարտըմեան:

Օրուան ձեռնարկի հանդիսավարուհի Օր Լուս Գուլումձեան, իր աւուր պատշաճի բարի գալուստի խօսքէն ետք, գործադրութեան դրաւ գողտրիկ յայտագիր մը, ուր իբրեւ գլխաւոր պատգամաբերներ, իրենց բաժինը պիտի բերէին «Ազգանուիրում»ի պատասխանատուներէն, հիմնադիր անդամ՝ Տիկ. Սիլվա Գարայեան եւ Յարութ Տէր Դաւիթեան: Սրտի խօսքով, նաեւ ելոյթ պիտի ունենար Փօօֆ. Միհրան Աղպապեան:

Տիկ. Գարայեան, սպառիչ կերպով անդրադարձաւ «Ազգանուիրում»ի ծրագրին եւ անոր՝ ներկայ առաջին տարեշրջանին տարածարդիւնաշատ աշխատանքներուն եւ առաջին հունձքին մասին, զոր շնորհաւորեց: Ան իր գնահատականը եւ շնորհակալութեան խօսքը ուղղեց Արեւմտեան թեմի Առաջնորդութեան ցուցաբերած քաջալերանքին, տուած հովանաւորութեան եւ բերած մասնակցութեան համար: Տիկ. Գարայեան գնահատեց իր գործակիցները, մենթորները, մենթիները (աշակերտները), ծնողները եւ «Ազգանուիրում»ի բարեկամներու գորակցութիւնը:

Գաղութիւս ծանօթ մտաւորականներէն Տիար Յարութ Տէր Դաւիթեան, հիմնուելով մեր պատմահայր խորենացիի հայթայթած պատմական տուեալներուն վրայ՝ տեղեկացուց որ «Ազգանուիրում»ի անհատական ծնունդը կ'առնէր Արա Գեղեցիկի որդիին՝ Անուշաւանի Սօսեաց անտառին նուիրումով, որ սկիզբը կը դնէր յետագային անոր «խօսքով հանձարեղ եւ գործով հօօր» անձնաւորութիւն մը դառնալուն:

Շար.ը էջ 17

ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԾՈՐԾ ԱՐԵԼԵԱՆԻ (ՄԱՀՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ)

Գ. ՄՈՒՈՅԱՆ

Շաբաթ, Հոկտեմբերի 17-ին, 2009, երեկոյեան ժամը 6-ին, հոծ բազմութիւն մը համախմբուած էր Կլենտոյլի գրադարանի հանդիսասարահը, նշելու համար մեր գաղութի հասարակական անձնուէր գործիչ ծործ Աբելեանի մահուան առաջին տարելիցը:

Բեմին վրայ գետեղուած էր հանգուցեալի նկարը՝ շրջապատուած գունագեղ ծաղկեկոկողներով:

Օրուան հանդիսավարն էր շնորհալի ասմունքող եւ «Բարեւ» հեռուստաժամի հեղինակ Նունէ Աւետիսեան: Ան՝ իր բացման խօսքին մէջ, ոգեկոչելով տարի մը առաջ մեզմէ անդարձ մեկնած ծործ Աբելեանի յիշատակը՝ բարձր գնահատեց անոր բերած օգուտաշատ ներդրումը մեր հասարակական կեանքէն ներս: «Երազի մարդ էր նա: Միշտ կ'երազէր ու կը պայքարէր Հայրենիքի, Ղարաբաղի, Հայ Դատի եւ պահանջատէր հայ ժողովուրդի արդար դատի յաղթանակին համար»:

Ծործ Աբելեանի յիշատակը մէկ վայրկեան յոտնկայս յարգելէ ետք, անգլերէն լեզուով աղօթեց վերապատուելի Ռան Թովմասեան:

Վաղամեռիկ ծործ Աբելեանի կեանքէն դրուագներ պատմեց Յարութ Տէր Դաւիթեան, թէ ինչպէս Հայկազեան Գոլէճէն ներս Յարութի դեկավարած ուսանողական ֆութպոլի խումբին մաս կը կազմէր նաեւ ծործը: Արդարեւ, թէ դաշտին վրայ եւ թէ ընկերային կեանքին մէջ, ան կը ցուցաբերէր իրերու հանդէպ յարուստ կեցուածք եւ աննկուն կամք: Ապա՝ իր խօսքը եզրափակելով յարեց. «...անոնք որոնք իրենց կեանքը կը նուիրեն գաղափարներու եւ չեն սահմանափակուիր միայն անցողակի երեւոյթներով՝ այդպիսիներն են որ այս աշխարհէն մեկնելէ ետք յիշատակներ կը թողուն իրենց մասին»:

Այստեղ յատուկ յիշատակութեամբ պէտք է նշել որ ծործ Աբելեան, Կլենտոյլի մէջ, տասը տարի շարունակաբար վարեց «Եղեգնեայ Գրչով» հեռուստաժամը: Այս մէկը փնտրուած հաղորդում մըն էր, յատկապէս ծործի կատարած քաղաքական եւ ազգային-հասարակական այլազան նուիրութիւն, իր խիստ այժմէական եւ

շահեկան մեկնաբանութիւններուն համար:

Այնուհետեւ սրտի խօսքերով հանդէս եկան նաեւ Շահէ Քէօրօլլեան, Արամ Ժէմճէմեան, Գրիգոր Մուրատեան, Պետրոս Հաճեան, Յարութիւն Յարութիւնեան, Յարութ Պրոնոզեան, Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան եւ ժանօ Թիթիգեան: Բոլորն ալ շեշտը դրին ծործ Աբելեանի անբասիր հայրենասէրի, հայ ժողովուրդի գերագոյն շահերուն համար աննկուն պայքարողի, գեղեցիկ նախաձեռնութիւններու հեղինակի, խիզախ մարտնչողի «հայրենիքի համար մեռնող» իսկական հայր բարձր արժանիքներուն վրայ:

Յուշ-երեկոյի յայտագրի գործադրութեան ընթացքին, մեծ պատաստով վրայ գրեթէ անընդմէջ ցուցադրուեցան ծործ Աբելեանի կեանքի գնահատան հանգուստներէն առնուած նկարներ: Տեսաերիզի վրայ լսեցինք նաեւ իր «Եղեգնեայ գրչով» հեռուստաժամի եւ այլ հրապարակային ելոյթներէն հատուածներ: Շատ յուզիչ էր իր վերջին հրաժեշտի խօսքը՝ որ կարծէք իր «Կարապի Երգը» ըլլար...:

Սոյն միջոցառումի գեղարուեստական բաժինին իրենց մասնակցութիւնը բերին Սօսի Մարտիրոսեան, Ներսիկ Իսպիրեան (երգ), Անի եւ Արէնի Նիւճիկեան նուազ):

Օրհնութեան խօսքով հանդէս եկաւ եւ միաժամանակ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ցաւակցական գիրը կարդաց Հոգւ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլլումեանը, որմէ ետք կատարուեցաւ հանգստեան աղօթք:

Տարաբախտ հայրենասէրին նուիրուած յուշ-երեկոյն վերջ գտաւ ներկաներու կողմէ երգուած «Կիլիկիա» խմբերգով: Ապա տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն եւ հոգեսուրճ, որու ընթացքին ներկաները առիթն ունեցան իրենց ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալի այրիին՝ Տիկ. Շաքէ Աբելեանին եւ համայն պարագաներուն: Կ'իմանանք թէ ծործ Աբելեանի եղբայրն ու այլ հարազատներ, այս օրերուն, հեռաւոր Քեսապի մէջ, այցելած են հանգուցեալի շիրիմը եւ իրենց յարգանքը մատուցած իր ծննդավայրին մէջ:

«Յիշատակն արդարոց օրհնուեամբ եղիցի»:

«ՍԻՓԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Այս տարի կը լրանայ Լոս Անճելըսի «Սիփան» Երգչախումբի հիմնադիր երգահան եւ խմբավար՝ Հենրիկ Անասեանի գործունէութեան 50 եւ երգչախումբին հիմնադրութեան 30 ամեակը: Հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Դեկտեմբերի 6-ին, 2009, երեկոյեան ժամը 6-ին, Հոլիվուտի Տաղլեան մշակութային համալիրին մէջ: 1201 N. Vine St. Hollywood, CA 90038 Սիրով կը հրաւիրուի հասարակութիւնը: Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ 323-466-3726 323-217-5730 626-437-1082 323-469-1879

ՊԵՆՏԱՄԻՆ ԶԱՐԶԵԱՆ

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԻՆԸ ԿԸ ՊԱՏՈՒԷՄԵԾԱՆՈՒՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ԷՄԻԼ ԳԱԶԱԶԸ

ՊԵՆՏԱՄԻՆ ԶԱՐԶԵԱՆ  
Իրաւարան

Նոյեմբեր 6, 7, 8-ի Ուրբաթ, Շաբաթ, Կիրակի, արտակարգ երեք օրեր պիտի ըլլան, նուիրուած աշխարհահռչակ քանդակագործ և նկարիչ՝ Էմիլ Գազազի արուեստին ու կեանքին: Գազազ, որ ճանչցուած է որպէս առասպելական և դասական արարածներն ու դէմքերը արդիական երկայրիւթեամբ յարակցող (juxtaposition) քանդակագործ/նկարիչ, ՀԲԸՄԻուԹեան կողմէ պիտի պատուուի իր բացառիկ տաղանդին, միջազգային ճանաչումին և յաջողութիւններուն համար:

Շաբաթավերջին բարձրակետը պիտի հանդիսանայ՝ Շաբաթ, Նոյեմբերի 7-ին, երեկոյեան ժամը 7.30-էն սկսեալ ՀԲԸՄ-ի Փաստինայի կեդրոնին մէջ Գազազին նուիրուած մեծարանքի երեկոն: Հանրութիւնը սիրով հրաւիրուած է մուտքը ազատ այս միջոցառումին և միանալու արուեստաճանաչ դէմքերու (connoisseurs), քննադատներ-



Էմիլ Գազազ

Գազազի գծի մասին: Ֆորտ Հաստատութեան անդամ, Մարիլինա Գոլէճէն Գեղարուեստից Մագիստրոսի տիտղոսին արժանացած Պրն. Լուիս, Գազազի արուեստին տիպարներն ու իրավիճակները կը բաղդատէ «Հոմերոսի արկածախնդրութիւններուն հետ, անցնելով անիրական աշխարհի մը երեւոյթներուն ընդմէջէն, ուր ոչ մէկ բան այն չէ՛, ինչ որ կը թուի ըլլալ»: Նոյեմբերի 7-ին, Գազազի աշխարհին ընդմէջէն ան պիտի առաջնորդէ հանդիսատեսը, անոր մէջ արժարձելով լաւագոյն հասկացողութիւն մը Գազազի հանճարին մասին:

- Տիգրան Արքան է բարեհաճել որպէս բարեկամ գալ այստեղ: Իմ գեղանի դուստր, այդ ի՞նչ ես արել ... քու ժպիտով հայոց առնական զորավար, Անտիոքի Փոխ Արքայ, Բագարատի հոգում հրդեհ ես բռնկել, սիրտն ես նրա շանթեր: Արմինան, Ասորիքի պոլիտիկոսն ու Անտիոքի ռազմական հովանաւորութիւնն է ստանձնել, բարեկամութիւն է երկու երկրների միջեւ, այն ամուր լինելու համար Տիգրան Արքան ցանկանում է ամուսնութիւն լինի իմ դստեր ու իր զորավարի միջեւ, թող հելլեններ աստուածները այն հովանաւորեն:

Անտիոքի պալատի առաջ հայոց զորքի հետ եկած հայրեն էին: Նրանց հետ էին նաեւ Անտիոքի պողոտայի արմէնները: Այնտեղ էին անտիոքիները: Լեռների երկիր Հայաստան, առանձին տօնել նախարարական, հազար բարբառների հայերէն խօսեցին: Խորը մտիկ ըրին իրարու, հասկանալի լինելու համար իրենց հայերէնները: Հայաստանի արեւմտեան ու հարաւի լեռնաշխարհներից եկած Անտիոքի հայերը շփուելով իրարու հետ, արդէն կարողացել էին հաղորդակցել, երբեմն էլ ծիծաղել նոյն իմաստը արտայայտող տարբեր հնչիւններով հայերէն բառերի արտաբերման առեւն:

Հայերը փողերի հնչիւնների ու թմբուկների զարկերի հետ երգում էին իրենց երկրի գողթան ու հարսանեկան երգերը: Հեթանոսական երգեր էին իրենց լեռնաշխարհի, ժայթքած հրաբուխների որոտների, գէնքերի շառաչների, արիական Դաւիթի թուր կեծակի բոցերի հնչիւններով: Անտիոքիներն էին ապշահար ունկնդրել: Երջան բռնած պար էին եկել Անտիոքի արմէնները, արքայի հետ եկած հայերը: Ով զարմանալի, նոյն կշռոյթով էին պարել, չէ՞ որ նրանց բոլոր շուրջ պարերը իրենց հեթանոս նոյն աստուածների մեհանները շուրջ նրանց փառաբանումն էր եղել: Յնձում էին Անտիոքի բազմազգի մարդիկ, իրենց դստեր հարսանիք: Հարսանիք էր Անտիոքում:

Բագարատան էր հայոց զորքի

ջոկատների պետերի հետ պալատի շքամուտքին: «Անտիոքի փեսան», կանչել էին անտիոքիները, «Հայոց զորքի զորավար Բագարատն է» բացականչել էին արմէնները: Առնական Բագարատան էր եղել արեւալոյս հագուստով: Արմէններն էին այն պատրաստած եղել Անտիոքում իրենց գործած կերպարից: Թագ չկար գլխին, սեւ վարսերն էին փրփրում ծովից հասած գեփիւռի համբոյրից: «Ինչքան աղուոր է արմէնածին փեսան Անտիոքի» բացականչել էին անտիոքիները:

Բագարատը զորականների հետ, գնում էին Անտիոքոս իշխանի պալատ: Նա վեր էր պահած եղել երկար եղէգ, որից «փող բոց ելանէր», վահագնի կրակալոյսը փռել Անտիոքի վրայ: Փողերն էին հնչում, թմբուկները զարկում: Հայ-արմէններն էին նրանց հետեւում: Յնձում էին, ցնձում էր Անտիոքը: Իրենց փոխարքան ի նշան բարեկամութեան ամուսնանում էր Անտիոքի իշխանի չքնաղ դստեր հետ: Քաղաքի պարսիկների շառարակների վրայ հայոց զորքն էր նաեւ ցնձում, իրենց զորավարի հարսանիք:

Իշխանի պալատի հրապարակում էին, շրջանաձեւ խմբուել նրա առաջ: Բագարատն էր եղէգնեայ ջահից լոյս ցանում պալատի շքամուտքին: Ի նշան բարեկամութեան, պալատում ջահեր էին վառուած: Մի խումբ Հայ-Արմէն աղջիկներ, ծաղկեփունջեր գրկած, ծրարներ վեր պահած, փողերի հնչիւնների ուղեկցութեամբ գնացել էին պալատի դրան առաջ: Անտիոքոսն էր դռները բացել, ժպիտով դիմաւորել նրանց, ներս հրաւիրել, ապա առաջնորդել Արտեմիս դստեր սենեակը: Աղջիկներն էին ծաղիկներ տեղացել նրա վրայ: Երգերի ուղեկցութեամբ, իրենց հետ բերած զգեստներն էին հագցրել Արտեմիսին, սպիտակ շրջագգեստ, լանջից ներքեւ իջնող արեւի ճառագայթներ, ինքը լուսնեակի անուշ դէմքով արեւածին աղջիկ: Անտիոքոսը ու իշխանուհի Դափնէն, թեւանցուկ առած Արտեմիսին, պալատի շքամուտքում էին: Հար-արմէններն էին երգել:

Անտիոքի Յելլեն աղուորիկ հարսիկ,

Աչերդ քու ծովակներ եմ կապոյտիկ,

Դեմքդ իրիկնային լուսնեակ անուշիկ:

Դուրս արի, ընկիր գիրկը քաջ Բագարատի,

Յանիք քո սրտին լոյս ժպիտդ արեգակի:

Յճճան արմէններ, հարսանիք է զորակարի:

Եկուր, եկուր Բագարատի հետ շրջան մտիր,

Արմէնների աստուածների շուրջ պարը բռնիր,

Տես, տես արեւը գրկած Վահագն ու Աստղիկ,

Ինչպէ՞ս են ժպտում կրակ լոյսով

արեգակի:

Եկ, եկ Անտիոքի սիրունիկ Յելլեն աղջիկ,

Բագարատն է ձեռքերդ պարզել գորովալի:

- Հայոց քաջ զորավար Բագարատ, մօտիկ արի, կանչել էր Անտիոքոսը, բռնիր ձեռքը իմ դստեր, կնութեան եմ տալիս նրան քեզ, որ հայոց պարզեւի զորավարներ, որ յարատեւ բարեկամութիւն լինի ցեղակից արմէնների ու հելլենների միջեւ:

Բագարատն էր մօտեցել նրանց, խոնարհուել Դափնէի ու Անտիոքոսի առաջ: Արտեմիսի դէմքի քողն էր իջեցրել, նրա շառագունած դէմքից ժպիտի լոյս էր անձրեւել: Տիգրան Արքայի դիմանկարով ոսկեդրամների շղթայ էր կապել Արտեմիսի ճակատին: Արմէն երկու աղջիկներ էին մօտեցել Արտեմիսին, նրա առսերին կախել բարակ երկար հացեր, որպէս նրանց որդեաց առատ հացի խորհրդանիշ:

Տղաներ ու աղջիկներ կողովներ, փարչեր բռնած մտել էին հրապարակ: Որոնդէսի ավերի եղէգից գործած սեղանների վրայ իրենց այգիների մրգեր, իրենց արտերի ցորեանի բարակ հացեր, փարչերով գինի, գարիի ջուր, կրակի վրայ եփած միս էին դրել: «Հայոց զորավար Բագարատի հարսանիքն է, մօտիկ եկէ՛ք, արբեցէ՛ք, հայոց աշխարհի տնկիներից հասունացած խաղողի գինիով, իմէ՛ք կարասներում հասունացած գարիի ջուր» կանչել էին արմէնները: Անտիոքոսն ու Դափնէն Բագարատին, Արտեմիսին գրկած մօտեցել սեղաններին, կաէճ բաժակներ գարկել իրար, գինի ըմպել, բարեմաղթել իրենց աստուածները իմաստուն ու քաջ որդիք պարզեւիին նրանց:

Թմբակահարն ու փողահարն էին հրապարակի մէջտեղ: Բագարատը, Արտեմիսի ձիւնտու ձեռքը բռնած շուրջ պարի մտել: Արտեմիսի ճակատին ամրացուած շղթայից, Տիգրան արքայի դրամների արեւի սկաւառակի լոյսն էր թափուում պարողների վրայ: Արտեմիսի այտերին կարծես արեւն էր շիկնել: Բոլոր, բոլոր շրջան էին անում, կարծես հայոց մեհանների շուրջը պար էին գալիս: Հայոց զորքի մի ջոկատի պետը կանչել էր.

- Նայէ՛ք վերեւ, ինչպէս են հայոց աստուածները ցնձում, արեւը գրկած շուրջ պար են բռնել:

Հայեացքները դէպի արեւը յարած, ձեռքերը դէպի վերեւ պարզած շարունակել էին տարբեր շուրջ պարեր բռնել:

Անտիոքի Հելլատացի տղաներ ու աղջիկներ, մօտեցել էին Անտիոքոսին ու Դափնէին, խնդրել իրենց հետ ազգային պարեր բռնելու: Լարային գործիքը ձեռքին հրապարակ էր մտել Հելլեն նուագածուն: Իրենց լոյսի աստուած, Չեւսի որդի Ապուլ-

Շաք. էջ 15

833 W. Glencroaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor

**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծածառուայիններ և մանուկներու Քայլափոխարկի բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօզային և մկանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի հետեանքով պատահած վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

### ԱՆՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԵՐ ԵՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

#### ԱԻՆՏԻՍՆԱԶԱՐԵԱՆ

Իւրաքանչիւր համայնք ունի իր իւրաքանչիւր սովորութիւնները, որոնք երբեմն այնքան են խորանուձ եւ արմատանում, որ դրանց փոփոխութիւնը եւ կամ մոռացումը թերեւս երկար տարիներ է պահանջում եւ սերնդափոխութեան հետ է կապուած: Անշուշ մեր խօսքը առնչուած է յոռի եւ ոչ ցանկալի սովորութիւններին, որոնք կարծես արդէն օրէնք են դարձել մեր առօրեայ կեանքում: Խօսքով վերաբերում է այն սովորութիւններին որ արմատաւորուել է մեր որոշ հայկական համայնքներում: Ուզում եմ արտայայտուել մեր հասարակութեանը առնչուող մի հարցի շուրջ: Դա տօնական օրերի կամ որեւէ առիթով եկեղեցի այցելելու խնդիրն է: Ամէն տեղ, (լինի դա այստեղ, Միացեալ Նահանգներում, Իրանում եւ կամ Միջին Արեւելեան որեւէ երկրում) եկեղեցի այցելելը համարում են մի տեսակ պարտադրանք: Պիտի գնալ եկեղեցի, 2-3 հատ մոմ վառել եւ հաւաքուել եկեղեցու բակի մի անկիւնում եւ գրուցել առօրեայ հոգսերի եւ կամ անց ու դարձերի մասին: Սուրբ Պատարագից յետոյ կատարուում են հոգեհանգստեան արարողութիւններ: Որեւէ ծանօթի, բարեկամի քառասորեակի եւ կամ տարելիցի առթիւ տեղի ունեցող հոգեհանգստին մասնակցելու եւ քո բարոյական պարտքը կատարելու

համար գնում ես եկեղեցի: Դէս ու դէս ես նայում, սակայն քո բարեկամի հարազատներից որեւէ մէկին չես գտնում: Ի վերջոյ 2-3 հոգու հանդիպելով զարմանում ես հապա որտե՞ղ են ննջեցեալի միւս հարազատները:

Պարզում է որ հարազատների կէս մասը եկեղեցու բակում, շրջապատուած ընկերներով գրոցի են բռնուել: Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ հագեճաշ է տրուում ննջեցեալի բնակարանում եւ կամ մի որեւէ ռեստորանում: Տարօրինակ է եւ զարմանալի: Յաւակցողների թիւը եկեղեցում հազիւ 10-15 էին հաւաքուած, որոնք մինչեւ իսկ չեն սպասում քահանայի այցելութեանը որն պիտի հոգեճաշի սեղանն օրհնի: Մտածում ես ինքդ քեզ, եթէ ճաշասեղանների շուրջ նստածները ննջեցեալին չարգելու համար են ներկայացել, ինչո՞ւ չէին բարեհաճել եկեղեցի գնալ, կամ եթէ գնացել էին, ինչո՞ւ էին եկեղեցու բակում գրոցի բռնուել սրա-նրա հետ: Սա եւս անցանկալի երեւոյթ է մեր իրականութեան մէջ, որին ակնատես ենք լինում եւ ի սրտէ ցաւում որ մեր իրականութեան մէջ առկայ են նման սովորութիւններ, որոնց վերացման համար իւրաքանչիւրս որոշ պարտականութիւններ ունենք: Ամէն մարդ պիտի զգայ որ եկեղեցի է գնում իր կրօնական պարտականութիւնը կատարելու, աղօթելու եւ թեթեւանալու հոգով ու սրտով:

### ՀԱՐՍԱՆԻՔ ԱՆՏԻՈՔՈՒՄ

#### Շարունակուած էջ 14-էն

լոնի կիթառի նմանակն էր եղել այն: Լարերի հպումից հոսում էին իրենց Ձեւի թեւաւոր դուստրերի մեղեդիների հնչիւնները: Շուրջ պար չէր եղել այն, իւրաքանչիւրը մարմնի տարբեր ելեւէջներով հանգիստ, հեղաճկուն պար էին եկել: Արմէններն էին խանդակաթ ծափերով ընկերակցել նրանց: Դափնէն էր մենապար բռնել, ծովահարների նման ծովի ալիքների վրայ ջրերն էին ճողբում, հոլանի ձեռքերն էին փրփրում փշրուած ջրերի պէս, կարծես բացատը ծով դարձած իրանն էր լողում նրա վրայ, հէքիաթի պարուհի: Անտիոքի հելլէնների հոգիներն էին արբեցել նրա հմայքից, հրապարակի շուրջ բոլորը պար էին եկել նրա հետ:

Եւ մի պահ Արտեմիան էր բացատում, ինն Մուսաներին ու յաւերժահարսերին նմանակած հելլէն պարմանուհիների հետ խմբապար էր բռնել: Առջեւից ընթանում էր լուսնեակ Արտեմիսը: Նուագածուի Ապոլլոնի կիթառի լարերն էին դողում, մեղմանուշ մեղեդի ջրվէժում: Արտեմիսի դէմքին արեւն էր իջել, նրան լոյսն էր հաւաքում արեւի, այն նետում Բագարատին, ձեռքերն էին հեղաճկուն շարժում փառելու նրան: Յաւերժահարսերն էին մօտենում նրան, արեւի ջրերը ջրերն էին նրան իրենց թեւերի վրայ, պտտում, պարում բացատում: Բացատի մարդիկ, արբեցել էին նրանց պարից, եւ բոլոր պար էին եկել, հարանիք էր: Բագարատն էր խենթացած վազել, առել նրան իր առնական բազուկների մէջ, բարձր պահել արեւին:

Բագարատն ու Արտեմիսը գնացել գրկախանուուել էին Դափնէի ու Անտիոքոսի հետ, որոնք ծնողական համբույրներ էին շողել նրան ճակատներին, մաղթել բազում ուրիշք: Բագարատն էր նորահարսին բազմեցրել նոսրի թամբին, ինքն էլ թռչելով թամբին, ձիավարելով Անտիոքի փողոցներով գնացել Աթենասի մեհեան: Ծաղիկի անձրեւ էր տեղացել նրանց վրայ, մարել էր խռովքը Բագարատի, խինդ էր հոսել դէմքից, աչքերից ուրախութեան լոյսի հեղեղ: Արտեմիան էր ստեպ, ստեղ շրջուել դէպի Բագարատը, ժպիտով չորհորել հանդարտի: Բագարատը, դիմաւորողների ահագնացած հրճուանքի բացականչութիւնների տարափի տակ, գրկել էր Արտեմիսին, համբույրներ տեղացել նրան վարդացած աչքերին:

Աթենասի մեհեանի առաջ Տիգրան Արքան էր: Հրճուագին գրկել էր նրանց եւ թեւանցուկ առաջնորդել մեհեան, Աթենասի արձանի առաջ: Արտեմիան էր ցանկացած եղել, իրենց ամենասիրած դիցուհու օրհնութեամբ հարս լինել: Այնտեղ էին եղել նաեւ Անտիոքոս իշխանը, Դափնէ իշխանուհին արքունի աւագանիի նախկին անդամները: Անտիոքն էր ամբողջ խմբուած մեհեանի հրապարակ, շնորհաւորում իրենց քաղաքի դատեր ու արմէն փոխարքայ Բագարատի ամուսնութիւնը: Մեհեանի զլխաւոր քուրմն էր եկել Աթենաս դիցուհու արձանի առաջ, ու այսպէս խօսել:

- Արեւելքի Արքայից Արքայ, Արմինայի թագաւոր Տիգրան, իմաստութեան աստուածուհի, ռազմուհի դիցուհի Աթենասն է օրհնում հայոց զօրավար Բագարատի ու

Անտիոքի իշխանի աստղածին դատեր ամուսնութիւնը: Թող նրա իմաստութիւնը ու ռազմուհու ոգին իջնի նրանց ժառանգների սրտերին: Անտիոքում օրէնք է, ամուսնութիւն կնքել Աթենասի օրհնութեամբ:

Տիգրան Արքան ու Անտիոքոսը հրամայել էին երկար օրեր հարսանիքի հանդէսներ լինէին Անտիոքում, պալատի ջահերը վառ մնային, նրա հրապարակում խառնկիւնրի հրավառութիւն լինէր, արմէնների պողոտայի աշտանակներից լոյս հոսէր, աստուածների ըմպելիք գինի հոսէր քաղաքում, նրա գուարձանքի տներում հարձերի հոլանի պարերով այրերը արբենային, թող ցնծար Անտիոքը:

Տարիներ, երկար տարիներ Բագարատը հասուն իմաստութեամբ կարավառել էր Անտիոքը, բարգաւաճութիւն ու խաղաղութիւն բերել քաղաքին: Եւ տարիներ յետոյ, արեւելքում նոր իրադրութիւն պիտի ստեղծուէր, նոր ռազմական ու քաղաքական դաշինքների հաւանականութիւն: Արմինայի հայկազուն Տիգրան իմաստուն արքան, պիտի կանխատեսէր թշնամի Հռովմի ու Պարթեւաստանի միջեւ իր երկրի դէմ ռազմական գործակցութիւնը: Հայքերով բնակուած Մեծ ու Փոքր Հայքերի երկիրը անասան պահելը մտահոգած էր եղել իրեն: Հայոց զօրքը դեռ հօր էր եղել, որ կարողանար յաղթական պատերազմներ մղել երկու թշնամի պետութիւնների դէմ: Հայրենապաշտ Արքայ հայոց լեռնաշխարհի, Հռովմի ու Պարթեւների դէմ երկու ճակատներով պատերազմ մղելու իր երկրին հասու վտանգը կշռադատելով, յանուն հայրենի երկրի ապահովութեան ու ամբողջականութեան, գիջել էր իր արքայական փառքը: Եւ իր բանակները բերել էր Հայքեր:

Բագարատն էր Արտեմիսի ու իր գաւակներ հետ վերադարձել երկիր: Հելլէն Արտեմիս, առնական Բագարատի հետ հոգին էր սիրով շղթայել, թող հայրենի քաղաք Անտիոք, եկել արմէնների աշխարհ: Հայացել էր Արտեմիսը, որդիք էին արմէնների անուաներով, խօսքն էր նրանց Հայքէն: Տիգրան Արքան, նրանց բնակութեան վայր էր թելադրած եղել Երասխ գետի հրուանդանի վրայ եղած բնակավայրը, պաշտպանելու նրա միւս արի անառիկ բլուրին կառուցուած ամրոցը: Արմինայի Արամ նահապետի թագաւորական տոհմի Մեհուա արքայի, իրար գրկած երկու գետերի հրուանդանի վրայ կառուցած քաղաքն էր եղել այն: Յետագայում, նրանց տոհմին փոխարինելու եկած, Տիգրան Արքայի նախապապերի, Երուանդունիների աթոռանիստ ոստան՝ Երուանդաշատ էր կոչուած եղել:

Տիգրան Արքայի մահից բազում տարիներ յետոյ, Հռովմի զօրքն էր նորէն արշաւած եղել հայոց երկիր, պաշարած Բագարատի ամրոցը: Քաջագուն Բագարատը, Արտեմիսը ու իրենց որդիք յանդուգնօրէն պաշտպանած էին եղել այն: Պահակագործի հետ իջել էին ամրոցից, գրոհել թշնամու վրայ, հարկադրել նրան նահանջել: Սակայն նահանջի բոլոր ճանապարհները բոց էին եղել, հրել էին նրանց Երասխի ջրերին, ահագնացած ալիքները գրկել էին նրանք ու տարել: Բագարատ, Արտեմիս, նրա որդիք, հայոց լեռնաշխարհում քաջութեան ու յիշատակելու արժանի ինչքան մեծ գործեր էին կատարած եղել:

### ԱՑՈՒՑԻՐ ԶԻՍ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՓԱՅԱՍԼԵԱՆ

#### ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

«Արարատ» օրաթերթի այս տարուան 18 Սեպտեմբերի թիւին մէջ երբ կարդացի մահազդի մը, որ կը ծանուցանէր անդարձ մեկնումը, առաջին րոպէն ցնցում մը ունեցայ: Աչքերուս չհաւատացի, թէ եւ մահը ամէն վայրկեան մեր շուրջն է եւ մեր մէջ, մեզի՝ բոլորիս ընկերակից, բայց գիտնալով հանդերձ այդ իրողութիւնը, մարդ կը խորհի, թէ մեր բարեկամները կան, ողջ են, այնքան ատեն որ մենք կ'ապրինք, եւ ահա՛, անոնցմէ շատերը մեր յաջորդ Պէյրութ մեկնումին կրնանք տեսնել, տարտոտուիլ, սրտակցիլ, բաժնել մանաւանդ մեր ազգային խոհերը, խօսիլ մեր ընկերներուն մասին:

Դուռն, սիրելի Յովհաննէս, այսօր լացուցիւր գիս:

Դուռն, որ սիրտի ու մանաւանդ աշխատանքի մարդ էիր, դուռն, որ սիրեցիր մարգաշխարհը եւ երկար տարիներ նուիրուեցար Հ.Մ.Մ.ի մարզական կեանքին, անվերջ ժողովներու մասնակից մը, խանդավառ նուիրեալ մը, այդ չար պահը, ինքնաշարժի արկած մը, ինչպէ՞ս տապալեց քեզ:

Դուռն Մարաշի Փայասլեան գերդաստանէն կու գայիր, ծանօթ այդ անունը բարձր պահողը:

Սա րոպէին կը չիշեմ մեր ծանօթացումի պահը, երբ Հալէպ եկած էիր, որպէսզի առողջութիւնդ հաստատող վկայագիր մը ունենայիր Գանատա մեկնելու համար:

Այդ վկայագիրը պէտք է հաստատէր Տօթթ. Միշէլ Տէմիրճեանը, քու հայրենակից, անտր վաւերագիրն էր, որ կ'ընդունուէր Գանատայի դեսպանութեան

կողմէ:

Միասին գացինք բժիշկին մօտ եւ երկար խօսեցանք Լիբանանէն ընտանեօք մեկնումիդ մասին: Մենք, երկու բժիշկ, համաձայն չէինք մեկնումիդ: Գանատան քեզի պէտք չունէր: Լիբանանը պէտք ունէր, Հ.Մ.Մ.ի ֆութպոլի խումբը քեզի պէս նուրեալի մը պէտք ունէր:

Խիստ էին մեր խօսքերը Մերձավոր Արեւելքի մեր գաղութները պահելու հարցին մէջ: Դուռն, անխօս, պաշարուած խոհերով, լսեցիր մեր խօսքը ու պատասխան մը չտուիր:

Իսկ յետոյ Պէյրութ մեկնելէդ ետք, որոշեցիր չմեկնիլ մեր դժուար դէպքերու ենթակայ Պէյրութ քաղաքէն: Ճիշտ ըրիր: Ընտանիք մը եւս մնաց մեր մօտ, սիրելի Յովհաննէսը մնաց մեր մօտ որպէսզի ազգին ծառայէ իր սիրած Հ.Մ.Մ.ի ճամբով:

Ամէն Պէյրութ գալուս, կարծես ժամադրուած ըլլայինք, կը հանդիպէի քեզի: Ընտանիքիդ եւս ծանօթացայ ու տեսայ թէ տուն եւ աշխատանքի վայրիդ մէջ հայ մամուլը սեղաններու վրայ էին: Դուռն ընթերցող էիր, ընթերցողներու սովի այս օրերուն: Հայ թերթն ու հայերէն գիրքը քու սիրելի բարեկամներդ էին: Օտար լեզուներով եւս կը կարդայիր, բայց մայրենին ուրիշ էր, հայերէն լեզուի համը ուրիշ էր:

Կը պատմէիր ընթերցումներէդ: Կը պատմէիր ժողովներէդ, թէ ինչեր կը ծրարէիք Հ.Մ.Մ.-ի գորացումին համար:

Ու հիմա չկա: «Արարատ»ը՝ հարազատդ ծանուցած էր այդ: Ուրեմն, չար արկած մը զգետնած էր քեզ:

# ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

## ԾԽԵԼՈՒ ՎՆԱՍԸ

«ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ԴԵՌ ԱՄԵՆ ԻՆՉ ԶԷ, ԲԱՅՑ ԱՌԱՆՑ ԴՐԱ ԱՄԵՆ ԻՆՉ ՈՉԻՆՉ Է»

### ԱՆՈՒՇ ԾԱԿՈՐԵԱՆ

Այսօր մարդկանց վրայ թափուում է շատ կենտրոնացված իրար հակասող առողջապահական տեղեկությունների մի հեղեղ: Յաճախ այսօր ցնցող լուրերը վաղը ժխտում են: Մարդիկ ժամանակակից, գիտականօրինակ հիմնավորում, հաճախակի են ողջամիտ, բոլորին հասկանալի լեզուով գրում են տեղեկությունների կարիք են զգում: Հենց այս պահանջներին է համապատասխանում ներկայացրեց նիւթերը, որի հիմքում ընկած է Ամերիկայում մեծ ճանաչում գտած «Առողջութեան պատիժներ» գիրքը՝ հրատարակուած 1991թ. Քալիֆորնիայում:

Իւրաքանչիւր մտածող մարդինչ-որ պահի ինքն իրեն հարց է տալիս. «Ինչն է կենսաբանական համար ամենակարեւորը»: Այստեղ տեղին կը լինի մէջբերել մեծ կատակերգակ Ուիլիսի մի միտքը, ուր շատ խելացի է նկատուած.

«Փառքն ու հարստութիւնը ոչինչ են, եթէ առողջ չես»:

Առողջութեան բանալիներ շարքը այն մարդկանց համար է, ովքեր թանկ են գնահատուած առողջութիւնը եւ ուզում են այն պահպանել: Շարքի հիմնական բաղադրիչ մասերն են՝

- N nutrition սնունդ
  - E exercises վարժութիւններ
  - W water ջուր
  - S sun արեւ
  - T temperance զսպուածութիւն
  - A air օդ
  - R relaxation հանգիստ
  - T trust վստահութիւն
- Ինչպէս նաեւ սով պահելու հրաշքը, սեւ խաղողը որպէս գոհիչ, բնաբուժութիւն, երկարակեցութիւն եւ ինչպէս յագեցնել, բաց չգիրանալ:

Տարիներ առաջ մի ուսանող այսպիսի արտայայտութիւն արեց. «Սիրում եմ կեանքը, ուզում եմ ապրել»: Այս տողն արտայայտում է իւրաքանչիւրիս թաքուն ցանկութիւնը: Կեանքը հրաշք է: Առողջ ապրենք այդ կեանքը:

### ԾԽԵԼՈՒ ՎՆԱՍԸ

Ծխելը՝ թմրամոլութեան ամենատարածուած տեսակներից մէկն է, որ ընդգրկում է մարդկանց մեծ քանակութիւն եւ այդ պատճառով կենցաղային թմրամոլութիւն է հանդիսանում: Ծխացող ծխախոտը ծխողին հաճուք է պատճառում: Յատկապէս սուր է զգացում ծխելու պահանջը սնունդ ընդունելուց յետոյ, ալքոհոլ ընդունած ժամանակ, բացասական յոգեբեր եւ լարուած աշխատանքի ժամանակ: Ընդ որում, ինքը՝ ընդունած նիկոտինը, որեւէ դրական ազդեցութիւն օրգանիզմի վրայ չի թողնում: Ծխախոտը հանդիսանում է աւելի շատ շեղող միջոց աշխատանքից, մտքերից... Որոշ նշանակութիւն ունի գեղեցիկ ներկուած տուփը, ծխելու ոճը, ծուխը դուրս հանելու ոճը: Կոկետութեան այս տարրերը յատկապէս բնորոշ են կանանց:

Սակայն այս հնարած օգտակարութիւնը ոչինչ է համեմատած այն վնասի հետ, որը ուղեկցում է ծխելուն: Ըստ թունաւորութեան նիկոտինը կարելի է համեմատել կապտաթթուի հետ. մարդու համար դրանց մահացու չափաբաժինը նոյնն է՝ 0,08 մգ: Այն պահին, երբ ծխում են, ջերմաստիճանը

ծխախոտի ծայրին հասնում է 600 աստիճանի ըստ Ցելսիուսի: Այդ ժամանակ ակտիւանում եւ օրգանիզմ են մուտք գործում չափազանց վնասակար նիւթեր. ածխածնի օքսիդ (շմուղ գազ), կապտաթթու, ամոնիակ, ռադիոակտիւ պոլոնիում, կապար, բիսմութ եւ այլ միացութիւններ, որոնք ունակ են առաջացնել չարորակ ուռուցքներ: ԱՄՆ-ում ծխելն ամէն 6-րդ մահուան պատճառն է հանդիսանում, ընդ որում դրանց կէսից աւելին՝ դա մահն է քաղցկեղից:

Ծխելը՝ ամենավնասակար սովորութիւններից մէկն է:

Հետազոտութիւնները ցոյց են տուել, թէ ինչու է կայանում ծխելու վնասը: Ծխախոտի ծուխը պարունակում է 30-ից աւելի թունաւոր նիւթեր. նիկոտին, ածխածնի օքսիդ, կապտաթթու, ամոնիակ, իւսթեր, օրգանական թթուներ եւ այլն: Եթէ ալքոհոլը՝ մոտթմրանիւթ է, ապա ծխախոտը՝ 20-ից աւելի տարբեր թոյներէրէ բաղադրուած կոկտեյլ: Ձեզանից ով՝ մտնելով բար, խիզախութիւն կ'ունենայ այդպիսի խառնուրդ պատուիրել: Սակայն հենց դա է գնում ծխողը, երբ իր վաստակն է վճարում ծխախոտի դիմաց:

Ծխախոտի 1-2 տուփը պարունակում է նիկոտինի մահացու դոզա: Ծխողին փրկում է այն, որ այդ դոզան ներմուծում է օրգանիզմ ոչ միանգամից, այլ կոտորակային ձեւով: Վիճակագրական տուեալներն ասում են, չծխողների հետ համեմատած ծխողները 13 անգամ աւելի յաճախ են հիւանդանում ստենոկարդիայով, 12 անգամ աւելի յաճախ՝ սրտամկանի ինֆարկտով, 10 անգամ աւելի յաճախ՝ ստամոքսի խոցով: Թոքի քաղցկեղով բոլոր հիւանդների բաւական ստուար մասը կազմում են ծխողները: Երկար ժամանակ ծխողների ամէն 7-րդը հիւանդ է խցանող էնդարտերիտով՝ արեան անոթների ծանր հիւանդութեամբ:

Ծխախոտի տերեւների մէջ քանակական պարունակութեամբ եւ մարդու տարբեր օրգանների վրայ թողած ազդեցութեամբ նիկոտինը զբաղեցնում է առաջին տեղը ծխախոտում եղած մնացած բոլոր վնասակար նիւթերի հետ համեմատած: Սակայն քիչ չի նաեւ ուռուցքածին նիւթերի քանակը (Բենզապիրեն, Դիբենզապիրեն, որ նպաստում են չարորակ ուռուցքների զարգացմանը):

ԿՆՀ - Նիկոտինը պատկանում է նեարդային թոյների շարքին: Կենդանիների վրայ փորձերի եւ մարդկանց հետազոտութեան ժամանակ պարզուել է, որ նիկոտինը փոքր դոզաներով գրգռում է նեարդային բջիջները, նպաստում է շնչառութեան եւ սրտի զարկերի յաճախացմանը, սրտային առիթմիային, սրտխառնոցին եւ փսիմանը: Մեծ դոզաներով՝ արգելակում է, իսկ յետոյ կաթուածահար անում կենտրոնական նեարդային համակարգի բջիջների գործունէութիւնը: Նեարդային համակարգի խանգարումները դրսեւորւում են աշխատունակութեան անկումով, ձեռքերի դողով, յիշողութեան թուլացումով: Օրեկան մէկ տուփ ծխելու սովորութիւնը յանգեցնում է մտաւոր ունակութիւնների արտայայտուած նուազմանը: Անզխացի գիտնականները բացատրում են դա

նրանով, որ նիկոտինային կախուածութիւնը բերում է ուղեղի բջիջների թթուածնային քաղցին: Անձը աստիճանաբար դեգրադացում է (հետ է զարգանում), այսպէս ասած՝ «ուղեղի վերափոխում ըստ հաւային տիպի»: Շատ բան կախուած է նրանից, թէ որքան վաղ է մարդը սկսել ծխել. եթէ ծխել սկսում են 10 տարեկանում, ապա այդպիսի երեխան վտանգի է ենթարկուած մտաւոր ունակութիւններով անգամ դպրոցը չաւարտել: Նիկոտինը ոչ այնքան քայքայում է արդէն եղած ինտելեկտը, որքան խոչընդոտում է ինտելեկտի զարգացմանը:

Հետազոտութիւնները ցոյց են տուել, որ ծխելը բազմաթիւ հոգեկան հիւանդութիւնների պատճառներից է: Ուղեղի անոթների նեղացման եւ խցանման պատճառով զարգանում է ինսուլտ: Ինսուլտը կարող է բերել կաթուածի՝ խօսքի եւ գիտակցութեան խանգարմամբ: Ծխելը նպաստում է զարկերակների պատերի կարծրացմանը եւ անոթների նեղացմանը, գլխուղեղի արեան մատակարարման խանգարմանը:

ՆՍԳ եւ Նիկոտինը ազդում է նաեւ ներքին սեկրեցիայի գեղձերի վրայ՝ մասնաւորապէս մակերիկամների վրայ, որոնք նրա ազդեցութեամբ արեան մէջ են արտադրում նորմալից աւել Ադրենալին հորմոնը, որը անոթների կծկանք է առաջացնում, բարձրացնում է զարկերակային ճնշումը եւ յաճախաց-

նում սրտի զարկերը: Կործանարար ազդելով սեռական գեղձերի վրայ, նիկոտինը նպաստում է տղամարդկանց մօտ սեռական թուլութեան զարգացմանը: Այդ պատճառով դրա բուժումը սկսում են այն բանից, որ առաջարկում են հիւանդին թողնել ծխելը:

ՇՀ - Շատ յաճախ ծխելը բերում է քրոնիկական բրոնխիտ («ծխողի բրոնխիտ») զարգացմանը: Դրա պատճառն է բրոնխների լորձաթաղանթի վրայ ծխախոտային ձիւթի նստուածքը, որը գրգռում է շնչական ուղիները եւ բերում բորբոքային պրոցեսի զարգացմանը: Այդ ժամանակ արտադրվող լորձը օրգանիզմից հեռացում է հազի միջոցով: Այսպիսով, ծխելը ուղեկցում է մշտական հազով եւ բերանի խոռոչից տհաճ հոտով: Մշտական հազը (ծխողի հազ) եւ դժուարացած շնչառութիւնը ուղղակի կախուածութեան մէջ են գտնուում ծխողը գլանակների քանակից:

Քրոնիկական բորբոքման հետեւանքով բրոնխները լայնանում են, առաջանում են բրոնխոէկտազներ ծանր հետեւանքներով՝ թոքերի պնեւմոսկլերոզով եւ էմֆիզեմայով, թոքային սրտով որը բերում է արեան շրջանառութեան անբաւարարութեան: Դա էլ հենց որոշում է մոլի ծխողի արտաքին տեսքը՝ խոպոտ ձայնը, այտուցուած դէմքը, հեւոցը: Քրոնիկական

Շարք էջ 19

**ՆԿԱՐՉԱԿԱՆ ԶՈՒՅԱԲԱՆԴԷՍ  
ԼՈՒՍԻ ՓԱՆՈՅԵԱՆԻ**

Նկարներուն յետ մահու ցուցահանդէսը

Կրեդի պիպի ունենայ  
Բինգզաբթի, Նոյեմբեր 12, 2009  
Երեկոյեան ժամը 8:00ին  
Թեքեան Մշակութային Միութեան  
Պէշկտօթիւրեան Սրահին մէջ  
1901, N. Allen, Altadena

Բովանաւորութեամբ  
Թեմիս Բարեջան Առաջնորդ՝  
Պերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս  
Տէրպերեանի  
Եւ  
Կապմակերպութեամբ  
Աթանեան Արուեստի Կեդրոնին

Նկարները պիպի ներկայացնէ  
Բայաստանի Պեպական մրցանակի դափնեկիր,  
Արուեստի վաստակաւոր գործիչ,  
Քալիֆորնիայի ցկեանս Նուաճումներու  
ադամանդէ մրցանակակիր,  
Արուեստի կեդրոնի փնօրէն՝  
Փրոֆ. Վադիմիր Աթանեան

Բացումէն վերջ կրեդի պիպի ունենայ  
հիւրասիրութիւն  
Բանրութիւնը սիրով հրակիրուած է

Յուշադրուելիք Նկարներուն մէկ մասը անհապնեւոր սեփականութիւնն է: Մնացեալ Նկարները, Նոյն օրը, այցելուներուն փրամադրելի պիպի ըլլան, փոխան Նուիրափուութեան մը Աթանեան Արուեստի Կեդրոնին

### ՂԱՐԱԲԱՂԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Շարունակում է 6-էն

Չոցներով, Ղարաբաղի տարբեր վայրերում հայեր սպանություններին: Օրերից մի օր սպանություն... ոչ, յօշոտություն, խոշտանգություն 8-ամեայ մի հայ տղայ: Մարդասպաններին գտան, երեք ատրպէյճանցիներ էին, որոնցից մէկը՝ այն դպրոցի գիրեկատորը, որտեղ սովորում էր այդ ութամեայ տղան:

Մարդասպաններին դատեցին եւ դատաւճիռը կարդացին Ստեփանակերտի քաղաքային այգում, բացօթեայ: Դատական որոշումը մեղմ էր ու անարդար: Ժողովուրդը, որ այլեւս չէր կարող համբերել՝ գայրացաւ, պոռթկաց, դիմեց ինքնադատաստանի. վառեց երեք մարդասպաններին:

Դրան հետեւեց մի անեղ հաշուարկար, որը անա վեց տարի է չի աւարտում ու չի մեղմանում: Բանտերը լցուեցին դարբանացի հայերով, որոնցից շատերը տանջամահ եղան հենց բանտի մէջ:

Սարսափը տարածուեց ամէնուր, սպանութիւններ կատարուեցին մարզի տարբեր վայրերում: Ստեփանակերտի շրջանի Կրասնի գիւղում ատրպէյճանցի զինուորականները մորթեցին մի հայ գեղձկուհու եւ մնացին անպատիժ:

Մարտակերտում ոչնչացրին կոլխոզային պահակի ամբողջ ընտանիքը: Ոճրագործները մինչեւ օրս էլ չեն «յայտնաբերուել»: Չեն «յայտնաբերուել» նաեւ այն գիշերահետնները, որոնք Նոր-Շէնի դաշտում սպանեցին երկու հայ տրակտորիստներ: Իսկ Շուշույի մասին խօսելն աւելորդ է, քանի որ այնտեղ իւրաքանչիւր ամիս հայ է սպանում՝ դանակով, ատրճանակի գնդակով կամ էլ մահադեղով:

Սպանութիւնների, ահաբեկումների այս շարքը վերջ չունի, քանի որ ամէն շաբաթ մի նորն ու առաւել անաւորն է կատարում: Վերջերս էլ աւտովթարի կազմակերպումով սպանել են մարզի գլխաւոր վիրաբէոյժ Շահէն Դանիէլեանին: Մարզի վարկուտ ղեկավարները ջանում են այդ ստորյանցագործութիւնը ներկայացնել որպէս պատահական աղէտ:

Ատրպէյճանցի ազգամուղ ղեկավարները Ղարաբաղը նուաճելու ամենայնուայի միջոցներից մէկն են համարում մարզի աչքաբաց ու համարձակ մտաւորակների դէմ նիւթող հալածանքները: Մարտում ստեղծել են այնպիսի վիճակ, արդարութեան մասին խօսք ասող եւ ընդգոյց մտաւորակների շուրջը կրակի այնպիսի օղակ, որ նրանք թողել են տուն տեղ, պապենական հող ու բնակավայր, եւ ապաստան փնտռել ուրիշ վայրերում:

Նրանց ետեւից հեռանում են

նաեւ արհեստաւորներն ու մանագէտները: Նրանք ուրիշ ելք չեն տեսնում դուրս գալու այն վիճակից, որ Ատրպէյճանի հայատեաց ղեկավարները եւ նրանց սպառնալիքի տակ ճգմուած հայ ապիկար պաշտօնեաներն են ստեղծել Ղարաբաղի անպաշտպան հայութեան համար:

Որպէսզի պարզ լինի, թէ Ղարաբաղի հայերի ատրպէյճանականացումը ինչպիսի միջոցներով է կատարում, բաւական է չիշել Ստեփանակերտի Մանկավարժական ինստիտուտի չարաբաստիկ օրինակը:

Տարիներ շարունակ դարբանացիները պահանջել են, որ մարտում բացուի որեւէ ինստիտուտ: Վերջապէս, չորս տարի առաջ կատարուեց այդ պահանջը, բայց այնպէս նենգօրէն, որ իրենք՝ դարբանացիները ինքրեցիկ ինստիտուտ չբանալ իրենց համար:

- Ինչո՞ւ...

- Որովհետեւ Ստեփանակերտում ստեղծուեց մանկավարժական ինստիտուտ, որի կէսն ատրպէյճանական է, ատրպէյճանցիների համար, այն էլ՝ ոչ դարբանացիական ատրպէյճանցիների, այլ ուրիշ վայրերից եկող ատրպէյճանցիներին:

Հարց է ծագում. ինչո՞ւ պիտի դրսից եկող ատրպէյճանցիներն ուսանի Ղարաբաղում եւ ոչ թէ տեղաբնակ ատրպէյճանցիներ:

Պատասխանը յստակ է. ատրպէյճանական բաժանմունքը պիտի վերածուէր լրտեսական կենտրոնի: Ինստիտուտն աւարտող ատրպէյճանցիները գնալով շատացան Ղարաբաղում եւ օրէօր բազմապատկուելով իրենց ձեռքն առան Ղարաբաղի վարչական օղակներն ու զանազան պաշտօններ:

Բաւական է ասել, որ Ստեփանակերտի միլիցիայում աշխատողների հիմնական մասը ատրպէյճանցիներ են եւ նրանք է, որ պիտի «պաշտպանեն» հայ աշխատաւորների իրաւունքները...:

Մանր, յուսահատ վիճակ է ապրում հայոց Ղարաբաղը: Ղարաբաղցի շատ է բողոքել, ընդվզել է իր արդար իւրաւունքները պաշտպանելու համար, բայց միշտ էլ մնացել է անպաշտպան:

- Եւ ինչո՞ւ, մինչեւ ե՞րբ...

Ոչ մի հանրապետութիւնում այնքան շատ չեն խօսում եղբայրութեան մասին, որքան Ատրպէյճանում:

- Ո՞ւր է եղբայրութիւնը, ո՞ւր են Ղարաբաղի հայութեան եղբայրները... Եթէ չեն ցաւում ուրիշների սրտերը, եթէ այսպիսին են նրա հետ եղբայրացածները, ապա ի՞նչ են մտածում արիւնակից եղբայրները, հայ եղբայրները:

### ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԿԱՐԱԳՐԻ ԿԵՐՏՄԱՆ ՃԱՄԲՈՒՆ

Շարունակում է 7-էն

Ապա ներկայացնելով Սասունցի Դաւիթի կերպարը, անոր նկարագրի իւրայատուկ գիծերը եւ անոր մատչելիութիւնը պատանիներուն, ան բացատրեց որ յարմար տեսնուեցաւ «Սասունցի Դաւիթ» շքանշանով պատուել «Ազգանուիրում» ընթացքը աւարտողները: Շնորհիւ այդ սքանչելի նկարագրի գիծերուն է, որ մեր ժողովուրդը պահած է իր ինքնութիւնը, աւանդութիւնները մինչեւ օրս, եւ շնորհիւ անոնց է, որ ան պիտի գոյատեւէ այսուհետեւ եւս, ըսաւ Տէր Դաւիթեան:

Սրտի խօսքով իր ելույթին մէջ Փրօֆ. Միհրան Աղապեան ջերմօրէն գնահատեց «Ազգանուիրում» կատարած դերը մեր հայ իրակաւութեան ներս: Նոր յաջողութիւններ մաղթեց անոր:

Հեզասահ ընթացող վկայականներու բաշխման հանդիսութեան՝ Վահան Թէքէեան Շաբաթօրեայ դպրոցի պարախումբը իր մանակցութիւնը բերաւ իրերաւ յաջող յաջող երկու ելույթներով, որոնք գնահատուեցան հանդիսատեսներու կողմէ: Ապա տեղի ունեցաւ վկայականներու տուչութիւնը. վկայուեցան եւ պարգեւատրուեցան աւելի քան 15 երկսեռ մենթորներ, որոնք ջերմօրէն ծափահարուեցան ներկայ հանդիսատեսներու կողմէ:

Նոյնքան ուրախանալի էր աւել-

լի քան 15 նոր թեկնածու մենթորներու բեմ հրաւիրուելը, ինչ որ կը փաստէր «Ազգանուիրում» դաստիարակչական բարեբեր գործընթացի շարունակականութիւնը:

Իր հուսք բանքին մէջ, Հոգշ. Տէր Տաճատ Մ. վրդ. Եարտըմեան շնորհաւորեց վկայաւորները: Ան բարձր գնահատեց «Ազգանուիրում» ի առաջադրած սկզբունքները: Խիստ ջատագովելի գտաւ անոր ջամբած հայեցի կրթութիւնը, հայու յաւերժական նկարագրի կոփման աշխատանքը, Սրբ. էջմիածնի հանդէպ դրսեւորած սէրն ու հաւատարմութիւնը, ինչպէս նաեւ, նոր սերունդներու հոգիներէն ներս անոր մուծած սէրը հանդէպ հայ մշակույթին, պատմութեան եւ ազգային ժառանգութիւններուն հանդէպ:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ Հայր Սուրբին պահպանիչով:

Ջերմօրէն կը շնորհաւորենք «ՀԲԸ Միութեան Երուանդ Պապայեան Մանկավարժական նորակազմ Հիմնարկ»ը, անոր նուիրեալ ուսուցչական կազմը, մենթորները, հիմնարկի վարչական անդամները եւ բոլոր անոնք, որոնք նիւթապէս, բարոյապէս եւ գործնապէս զօրավիգ կը կանգնին այս հայակերտումի նուիրական շարժումին: Կա՞յ ներկայիս աւելի կարեւոր աշխատանք, քան մեր նոր սերունդներու առողջ դաստիարակութիւնը մեր այս գահավիժող, այլապէս յուսահատեցուցիչ կեանքի պայմաններուն տակ:

### Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ ԷՄԻԼ ԳԱԶԱԶԸ

Շարունակում է 8-էն

կը կազմեն՝ Անի Այվազեան, Արա Պապայեան, Նայիրի Պալեան, Պէնճամին Չարչեան, Իվան Քէսեան, Գրիգոր Սաթամեան, Շաքէ Թումայեան եւ ծանր աշխատանքի լծուած բազմաթիւ կամաւորներ, որոնք իրենց ամբողջ ներդրումը ի գործ դրած են իրականացնելու՝ ՀԲԸՄիութեան համար տարուան ամենակարեւորը ըլլալու սահմանուած այս միջոցաւումը:

Համահունչ այս ձեռնարկի ոգին, էմիլ Գազազի համաշխարհային ներկայացուցիչ եւ Airian Dome

of Fine Art-ի հիմնադիր և նախագահ Մօնէ Այրեան համաձայնած է նուազեցնել ցուցադրութեան դրուած արուեստի գործերուն գիները, այնպէս որ ասիկա սքանչելի առիթ մը պիտի ըլլայ ձեռք ձգելու Գազազի գործերը և միաժամանակ աստարելու ՀԲԸՄիութեան ծրագիրներուն, Հարաւային Գալիֆորնիոյ մէջ:

Յաւելեալ տեղեկութեանց համար, կը խնդրենք դիմէք ՀԲԸՄիութեան, հեռաձայնելով՝ (626) 794-7942: ՀԲԸՄիութեան Կեդրոնին հասցէն է՝ 2495 E. Mountain St., Pasadena, CA 91104:

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**  
**ՀԵՌՈՒՍՏՏԵՄԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ**  
**CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ**  
**(ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**  
**GLOBACAST SATELLITE**  
**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
**1060 North Allen Avenue**  
**Pasadena, CA 91107**

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:  
**Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝**  
**(626) 398-0506**

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
**ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՐՐԱՅԱՄ ՆՈԿԱՈՒՏԻ ԵՆԹԱՐԿԵՑ ԱՇԽԱՐՀԻ ՆԱԽԿԻՆ ԱՆՈՅԵԱՆ ԶԵՐՄԵՅՆ ԹԵՅԼՈՐԻՆ

Միջին քաշային կարգում IBF վարկածով նախկին աշխարհի ախոյեան, հայ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը բռնցքամարտի «Super Six World Boxing Classic» մրցաշարի իր առաջին մենամարտում նոկաուտի է ենթարկել այդ նույն քաշային կարգում աշխարհի մեկ այլ նախկին ախոյեան Զերմեյն Թեյլորին:



Պեռլինում կայացած մենամարտում, լի տրիբունաների աչքի առջև, 29-ամեայ Աբրահամը վստահաբար վերցրեց նախաձեռնությունը, Արթուրն իրեն յատուկ ոճով անցկացրեց մենամարտը՝ 6-րդ ռաունդից սկսած ուժեղացնելով ճնշումը մրցակցի վրա: Հայ բռնցքամարտիկի առաւելութիւնը նկատելի էր ողջ մենամարտի ընթացքում: Թէեւ նրա մրցակից 31-ամեայ Թեյլորը շատ էր շարժուում եւ երբ թւում էր, որ Արթուրը մենամարտը կը շահի միաւորներով, 12-րդ ռաունդի վերջին վայրկեաններին հետեւեց աջից ուժգին դիմահար հարուածը, որը պարզապէս ռինգի յատակին տապալեց ամերիկացի բռնցքամարտիկին: Նա որոշ ժամանակ պառկած մնաց յատակին եւ միայն բժիշկների օգնութեամբ ուշքի եկաւ: Թեյլորն ուղեղի ցնցում էր ստացել եւ մենամարտից յետոյ տեղափոխուեց հիւանդանոց, որտեղ մի քանի օր կ'անցկացնի:

Վաղաժամ յաղթանակը Արթուրին դարձրեց մրցաշարի առաջատարը, քանի որ, ըստ կանոնների, առաջին, խմբային փուլում վաղաժամկէտ յաղթանակը 3 միաւոր է բերում մարզիկին, դատաւորի որոշմամբ նուաճուած յաղթանակը՝ 2 միաւոր, ոչ ոքին՝ մեկ միաւոր, եւ պարտութիւնը՝ ոչինչ:

Երկրորդ մենամարտում Կառլ Ֆոքսը յաղթեց ամերիկացի Անդրէ Դիրբելին մրցավարների ոչ միաձայն որոշմամբ՝ 115-112, 115-112 եւ 113-114 հաշուով:

Այդպիսով, Արթուր-արքան իր 30-րդ յաղթանակն է տարել պրոֆեսիոնալ ռինգում եւ 25-րդը՝ նոկաուտով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Տեղի ունեցան Հայաստանի ֆուտբոլի բարձրագոյն խմբի առաջնութիւն 25-րդ տուրի հանդիպումները: Երեւանի «Փիւնիկ»ը սեփական յարկի տակ խաղում 6:0 հաշուով ջախջախեց առաջնութեան հետնապահին՝ Երեւանի «Արարատ»ին: «Միկա»ն չթողատրեց «Փիւնիկ»ին՝ մեծացնելով միաւորների տարբերութիւնը: «Բանանց»ի հետ չափազանց սկզբունքային խաղում միկացիները յաղթեցին 3:1 հաշուով եւ գործնականում լուծեցին արծաթէ մետալների խնդիրը: Երրորդ տեղում ընթացող «Ուլիս»ը, որը հաշուետու տուրում 1:0 հաշուով Գիւմրիում առաւելութեան հասաւ տեղի «Շիրակ»ի նկատմամբ, «Միկա»յին գիշում է 8 միաւորով:



Կապանի «Գանձասար»ը, չնայած հենց մեկնարկում գնդակ ընդունեց սեփական դարպասը, այնուամենայնիւ, կարողացաւ չորս կող խփել եւ յաղթել Երեւանի «Կիլիկիա»ին:

Մրցաշարային Թիմ	Խ	Հ	Ո	Պ	ԳՈՂ.	Մ
1 «Փիւնիկ»	25	17	5	3	50-12	56
2 «Միկա»	25	17	3	5	55-27	54
3 «Ուլիս»	25	14	4	7	39-19	46
4 «Բանանց»	25	13	3	9	36-24	42
5 «Գանձասար»	25	11	2	12	26-36	35
6 «Շիրակ»	25	5	8	12	22-46	23
7 «Կիլիկիա»	25	4	4	17	18-48	16
8 «Արարատ»	25	1	7	17	14-48	10

Զ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆԸ՝ Մ. ՉԻԳՈՐԻՆԻ ՅՈՒՇԱՄՐՅԱՇԱՐԻ ՅԱՂԹՈՂ

Հայաստանցի գրոսմայստեր Զաւէն Անդրէասեանը դարձել է Սանկտ Պետերբուրգում աւարտուած լեգենդար ռուս շախմատիստ Միխայիլ Չիգորինի աւանդական, 16-րդ յուշամրցաշարի միանձնեայ յաղթողը՝ վաստակելով 9,5 միաւոր 11 հնարաւորից: Նրանից 1 միաւորով հետ են մնացել ռուսաստանցի շախմատիստներ Ի. Խայրուլինիը, Ի. Կովալենկոն եւ Ե. Վորոբեյովը: Հրանտ Մելքոնեանը 7,5 միաւորով զբաղեցրել է 14-րդ տեղը:

ՕՍՆՐԱՍԱՐՏԻ ԵՐՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ՆՈՒԱԾԵՑ 7 ՈՍԿԷ, 6 ԱՐԾԱԹԷ ԵՒ 3 ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼ

Լեհաստանի Վլադիսլաւլեօ քաղաքում անցկացուած մինչեւ 23 տարեկանների Եւրոպայի առաջնութեան մրցաշարում Մանրամարտի Հայաստանի երիտասարդական հաւաքականը նուաճեց 7 ոսկէ, 6 արծաթէ եւ 3 պրոնզէ մետալ:

Հայաստանի 62կգ քաշային ծանրորդ Վանիկ Աւետիսեանը ցոյց տալով 270կգ արդիւնք երկամարտում, նուաճել է պրոնզէ մետալ: 274կգ արդիւնքով երկամարտում Եւրոպայի ախոյեան է դարձել Դամիրան Վիշնեւսկին՝ Լեհաստանից, 273կգ արդիւնքով երկամարտում 2-րդ տեղը զբաղեցրել է Բուսիամի Սեգերը՝ Թուրքիայից:

Վ. Աւետիսեանը պոկում վարժութիւնում 119կգ արդիւնքով զբաղեցրել է 4-րդ, իսկ հրում վարժութիւնում՝ 2-րդ տեղը՝ 151կգ արդիւնքով նուաճելով փոքր արծաթէ մետալ:

Մինչեւ 77 կգ քաշային կարգում Գերագանց Ելոյթ ունեցաւ Ադասի Ադասեանը: Նա երկամարտի 337 կգ (150+187) արդիւնքով հռչակուեց Եւրոպայի ախոյեան: Պոկում վարժութիւնում նա 150 կգ-ով արժանացաւ պրոնզէ մետալի՝ իրենից առաջ թողնելով Թուրք ծանրորդ Սեմիհ Եագլիին (154 կգ) եւ ուքրանացի Եուրի Շիկիդային (153 կգ): Հրում վարժութիւնում հայ ծանրորդը գերագանցեց բոլորին՝ արժանանալով փոքր ոսկէ մետալի, ինչպէս նաեւ երկամարտի արդիւնքով հռչակուեց Եւրոպայի ախոյեան: Երկամարտում Ադասին 4 կգ-ով առաջ անցաւ ուքրանացի Եուրի Շիկիդայից: Պրոնզէ մետալին արժանացաւ լեհ Ռոման Կլիչը՝ 331 կգ (148+183):

Մինչեւ 85 կգ քաշային կարգում Ադուան Մելիքեանը երկամարտի 354 կգ (160+194) արդիւնքով գրաւեց 2-րդ տեղը: Պոկում վարժութիւնում 160 կգ արդիւնքով փոքր արծաթէ մետալ նուաճեց: Հրում վարժութիւնում նա բարձրացրեց 194 կգ-ը, ինչը նրան եւս մէկ արծաթէ մետալ պարգեւեց: Մելիքեանը երկամարտում 10 կգ-ով գիշեց ախոյեան հռչակուած բելառուսցի Նիկոլայ Նովիկովին՝ 364 կգ (165+199): Պրոնզէ մրցանակակիր դարձաւ ռուսաստանցի Վիաչեսլաւ Ուշակովը՝ 352 կգ (160+192):

Մինչեւ 94 կգ քաշայինների մրցավէճում Վարդան Դաւթեանը երկամարտի 359 կգ (160+199) արդիւնքով դարձաւ Եւրոպայի փոխախոյեան: Պոկում վարժութիւնում նա արծաթէ մետալ նուաճեց, իսկ հրումում արժանացաւ ոսկէ մետալի, քանի որ 50 գրամով թեթեւ էր լիտացի Աուրիմաս Դիթբալիսից: Վերջինս էլ երկամարտի 362 կգ (163+199) արդիւնքով հռչակուեց Եւրոպայի ախոյեան: 3-րդ մրցանակակիրն ալբանացի Սերաֆին Վելին էր՝ 348 կգ (158+190):

Հայ ծանրորդների յաջող Ելոյթները գերագանց եզրափակեց գերծանր քաշային Ռուբէն Ալեքսանեանը՝ նուաճելով Եւրոպայի ախոյեանի տիտղոսը: 141 կգ անձնական քաշ ունեցող 19-ամեայ հայ պատանին երկամարտում ցոյց տուեց 416 կգ (181+235) արդիւնք՝ 9 կգ-ով գերագանցելով արծաթէ մրցանակակիր, ռուսաստանցի Դաւիթ Կադանցին: Ընդ որում Ռուբէնը պոկում վարժութիւնում 181 կգ արդիւնքով նոյնիսկ մետալ չնուաճեց: Սակայն հրում վարժութիւնում նա գերագանցեց բոլորին: Բաւական է նշել, որ 2-րդ արդիւնքը ցոյց տուած Կադանցը հրումում 11 կգ-ով հետ մնաց հայ ծանրորդից: Ռուբէնի առաւելութիւնն աւելի տպաւորիչ կը լինէր, եթէ 3-րդ մտացմամբ բարձրացնէր 241 կգը: Պրոնզէ մետալակիր, ռուսաստանցի Իգոր Լուկանինը երկամարտում ցոյց տուեց 405 կգ (185+220) արդիւնք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ՖԻՖԱ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՂԻՄԱԿՈՒՄ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է 25 ԿԵՏՈՎ

2009 թ. Հոկտեմբերի 16-ին հրապարակուեց ազգային հաւաքականների ՖիֆԱ-ի դասակարգման աղիւսակը: Նախորդ ամսուայ համեմատ Հայաստանի ազգային ընտրանին բարձրացել է 25 տեղով եւ զբաղեցնում է դասակարգման աղիւսակի 100-րդ հորիզոնականը: Առաջատարների եռեակում փոփոխութիւն չկայ: Դասակարգման աղիւսակը շարունակում է գլխաւորել աշխարհի հնգակի ախոյեան Պրազիլիայի հաւաքականը, որին յաջորդում է Եւրոպայի գործող ախոյեան Սպանիայի ընտրանին, իսկ առաջատարների եռեակը եզրափակում է Հոլանտան:

Լաւազոյն տասնեակում իր տեղում՝ 7-րդ հորիզոնականում է մնացել միայն Անգլիայի հաւաքականը: Ռուսաստանի հաւաքականը դուրս է եկել առաջին տաս հաւաքականների շարքից՝ 6-րդ իջնելով 12-րդ տեղ: Իսկ պորտուգալացիները 17-ից 10-րդ տեղն են բարձրացել:

Առաջին տաս թիմերի եւ ենթախմբում Հայաստանի հաւաքականի մրցակից թիմերի դասակարգային դրութիւնն ունի հետեւեալ տեսքը՝

- 1. Պրազիլ - 1632 (միաւոր)
- 2. Սպանիա - 1629
- 3. Հոլանտա - 1340
- 4. Իտալիա - 1215
- 5. Գերմանիա - 1161
- 6. Արժենդինա - 1103
- 7. Անգլիա - 1101
- 8. Խորուաթիա - 1087
- 9. Ֆրանսա - 1049
- 10. Պորտուգալիա - 1042
- 39. Թուրքիա - 731
- 42. Բոսնիա եւ Հերցեգովինա - 721
- 68. Բելգիա - 474
- 100. ՀԱՅԱՍՏԱՆ - 325
- 103. Էսթոնիա - 306

ԾԽԵԼՈՒ ՎՆԱՍԸ

Շարունակում էք 16-ին

բրոնխիտի վերջին փուլերից մեկը՝ թոքերի էմֆիզեման է: Առանց թոքերի շնչել հնարավոր չէ, այսինքն՝ ապրել հնարավոր չէ: Ծխելը քայքայում է թոքերը: Բժիշկներն այդ վիճակը անուանում են թոքերի էմֆիզեմա: Դա ամենասարսափելի հիվանդություններից մեկն է, որ հանդիպում է բրոնխիտներին: Այն սկսում է հազից, որը բավականին արագ ուժեղանում է եւ յանգեցնում նկատելի հեղուկ: Ծխախոտի մեջ պարունակվող թոքերի ազդեցությունն սակ թոքային բջիջները պատերը կորցնում են իրենց էլաստիկությունը եւ պատռւում, առաջացնելով օդով լցված մեծ խոռոչներ: Դրա պատճառով փոքրանում է շնչական մակերեսը եւ շնչառությունը դառնում է անարդիւնաւէտ: Թոքերի էմֆիզեմայով տառապող մարդը մահանում է դանդաղ մահով օրգանիզմում թթուածնի պակասի պատճառով: Ցաւօք, այս հիվանդութիւնն անբուժելի է: Մի բժիշկ պատմում է իր հիւանդի մասին. «Նրա անունը Ջոն էր, նա 30 տարեկան էր: Դրանից հինգ տարի առաջ, երբ Ջոնը առաջնակարգ դահուկորդ էր, նա ունէր ատլետիկ կառուցուածք, 180 սմ հասակով, 85 կգ քաշով: Նա նաեւ մոլի ծխող էր, օրեկան միջինում 2 տուփ ծխախոտ էր ծխում: Իսկ այժմ Ջոնը նման էր քայլող կմախքի: Մէջքի կորուստն պատճառով նա այժմ 5 սմ աւելի կարճ էր եւ կշռում էր 58 կգ: Ջոնը թոքերի էմֆիզեմա ունէր, եւ նա կարող էր հիւանդանոցակում ընդամէնը 4-5 քայլ անել, որից յետոյ ստիպուած էր յենուել պատին եւ հանգստանալ, նախքան առաջ գնալը: Նրա կուրծքը բարձրանում էր եւ ներսում ամէն բան սուլում էր: Նրա դէմքի արտայայտութիւնը տագնապով լի էր, ինչպէս վերջին շունչը քաշել պատրաստուող մարդու մօտ: Ճակատով եւ այտերով հոսում էին քրտինքի կաթիլներ:

Նա չէր կարողանում փչելով հանգոնել այրուող լուցկին անգամ 10 սմ հեռաւորութեան վրայ: Չհասնելով 40 տարեկան հասակին Ջոնը մահացաւ մի հիւանդութիւնից, որը 90 տոկոսով կարելի էր կանխել»: Այս հիւանդութիւնը արդիւնաւէտ բուժում առայժմ չունի: Գուցէ երբեք կը գործածուի թոքերի պատուաստումը՝ դա յայտնի չէ: Բացի, առայժմ, ոչինչ չի օգնում այդ հիւանդութեամբ տառապողներին: Միակ իրական օգնութիւնն է՝ անմիջապէս թողնել ծխելը: Իսկ աւելի լաւ է՝ երբեք չսկսել:

Յատկապէս վնասակար է ծխելը երեխաների եւ դեռահասների համար: Դեռ չամրապնդուած նեարդային եւ արիւն ատար համակարգը հիւանդագին են ընկալում ծխախոտը: Բացի նիկոտինից, բացասական ազդեցութիւն են թողնում ծխախոտի ծխի այլ բաղկացուցիչ նիւթերը: Երբ օրկանիզմ է մտնում ածխածնի օքսիդը, զարգանում է թթուածնային քաղց այն բանի հաշուին, որ այդ զագը աւելի հեշտ է միանում հեմոգլոբինի հետ, քան թթուածինը եւ փոխադրում է արեան միջոցով մարդու բոլոր օրգաններին եւ հիւսուածքներին:

Ինչպէս նշեցինք, ծխողների մօտ թոքի քաղցկեղը 20 անգամ աւելի յաճախ է առաջանում, քան չծխողների մօտ: Որքան երկար ժամանակ է մարդ ծխում, այնքան աւելի մեծ է այդ ծանր հիւանդութեամբ հիւանդանալու յաւանականութիւնը: Թոքի քաղցկեղը հագուակաւիտ է տալիս վաղ նշաններ, այդ ընթացքում հասցնելով տարածուել ամբողջ օրգանիզմով մէկ (յաճախ լեարդում եւ ուղեղում), նախքան կը յայտնաբերուի ունագենեան ճառագայթներով: Ապացուցուած է, որ թոքի քաղցկեղի զարգացման գլխաւոր պատճառն են հանդիսանում ծխախոտային խեժերը: Ծխելը ոչ միայն թոքի քաղցկեղի առաջացմանն է նպաստում, այլ նաեւ ունակ է խթանելու արդեն գոյութիւն ունեցող ուռուցքների աճը:

ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻՆ ՑՈՒՑԱԴԻՌՈՒՄ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ

Շարունակում էք 13-ին

բազմաթիւ նամակներում նա արտայայտում է Արեւմտեան Հայաստանի վերադառնալու կարօտը՝ բանաստեղծօրէն խօսելով հարագատ երկրի մասին. նրա գիւղերի հինաւուրց խաչքարերի, իր հարագատ վանի աղով լցուած օդի, լեռների բոցրի, երիտասարդ ժամանակ կերած տոլմայի, եւ իհարկէ իր սիրելի Արարատ լեռան մասին, որին Գորկին անուանել էր «բնութեան շարժումները կարգաւորող ուղեղ»:

Ի վերջոյ Արշիլ Գորկին դարձաւ քսաներորդ դարի ամենաազդեցիկ նկարիչներից մէկը, եւ հենց այն ժամանակ, երբ նրա ճանաչումը հասնում էր նոր բարձունքների, 1948 թուականին նրա կեանքը ողբերգական կերպով աւարտուեց ինքնասպանութեամբ: Կորքու ցուցահանդէսը Գաֆէսճեան արուեստի կենտրոնի բացումը նշանաւորող բազմաթիւ ցուցահանդէսներից մէկն է եւ արժանի գնահատանքը մի արուեստագետի յիշատակին, որի մահուան 60-րդ տարելիցը յիշուած է մեծամասշտաբ ցուցադրութիւններով աշխարհի այնպիսի թանգարաններում, ինչպիսիք են Ֆիլատելֆիայի Արուեստի թանգարանը եւ Լոնտոնի Թեյթ Մոդեռնը եւ այլն:

Գաֆէսճեան արուեստի կենտրոնի հանդիսաւոր բացման արարողութիւնը կը մեկնարկի Նոյեմբերի 7-ին, շաբաթ երեկոյեան՝ շքեղ հրավառութեամբ Կասկադ համալիրի մօտ: Կասկադը լիովին վերափոխուել է՝ դառնալով աշխարհի ամենատեսարժան ժամանակակից արուեստի կենտրոններից մէկը: Կիրակի օրը, Նոյեմբերի 8-ին կենտրոնը հրաւիրում է հանրութեանը՝ գնահատելու իրականացուած աշխատանքը Կասկադի ներսում եւ ծանօթանալու ցուցահանդէսների, դասախօսութիւնների, գրքերի շնորհանդէսների, համերգների եւ այլ միջոցառումների ժամանակացույցին: Միայն այդ օրը Գաֆէսճեան արուեստի կենտրոնի մուտքն անվճար կը լինի հանրութեան համար:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ԳՅՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Table with 2 columns: Rental type and Price. Includes items like 'Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400', 'Long Weekend-ների համար՝ \$ 500', 'Մէկ շաբաթուայ համար՝ \$ 675', 'Մէկ ամսուայ համար՝ \$ 1450'.

ԲԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30 Կլէնտէյլի 280-րդ կայանից

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104 Norserount@sbcglobal.net

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1679 THE RE-ROOFING OF SIXTEEN (16) BUILDINGS AT AVALON GARDENS The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for The Re-Roofing of Sixteen (16) buildings at Avalon Gardens Housing Development located at 701 E. 88th Place, Los Angeles, CA 90002. Copies of the IFB may be obtained at the HACLA's General Services Department, 2600 Wilshire Boulevard, Suite 3100, Los Angeles, CA 90057. Copies of the IFB may also be downloaded from the internet at WWW.HACLA.ORG/CGS. Bids will be accepted at the same location until 2:00 p.m. (local time), October 30, 2009. 10/22/09 CNS-1709750# MASSIS WEEKLY

INVITATION FOR BIDS (IFB) No. 1681 THE RE-ROOFING OF TWELVE (12) BUILDINGS AT MAR VISTA GARDENS The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for The Re-Roofing of Twelve (12) buildings at Estrada Courts Housing Development located at 11965 Allin Street, Culver City, CA 90230. Copies of the IFB may be obtained at the HACLA's General Services Department, 2600 Wilshire Boulevard, Suite 3100, Los Angeles, CA 90057. Copies of the IFB may also be downloaded from the internet at WWW.HACLA.ORG/CGS. Bids will be accepted at the same location until 3:00 p.m. (local time), October 30, 2009. 10/22/09 CNS-1709750# MASSIS WEEKLY



"Քաջ Նազար" հանդեսը եւ հեռուստաժամը  
 Ներկայացնում է  
**10-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ**

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԲԻՄՆԱԴՐԱՄԻ,  
 ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒԻՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆՂԱՄ  
 ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ  
 ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԲԱՍԱՐ  
 (հիմնաձ 1999թ.)

**Կիրակի, Նոյեմբեր 1, 2009**  
**երեկոեան ժամ 4-12-ը**

Sponsored by

**"KACH NAZAR"** Magazine & TV Show

**10 ANNIVERSARY**

NATIONWIDE **TELETHON**

**ON SUNDAY**  
**NOVEMBER 1, 2009**

to Benefit **CHRISTMAS FUND FOR ARMENIAN ORPHANS**  
 and **DISABLED CHILDREN**  
 and The **RESTORATION OF CHILDREN'S HOMES (Est. 1999)**

**ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ**  
**ԱՊԱԳԱՆ ԿԵՐՏԵԼՈՒ ԲԱՍԱՐ**

**HELP OUR CHILDREN TO BUILD THEIR FUTURE . . .**

**AMGA**  
**CHANNEL 280**  
 Glendale, CA  
**From 4:00 pm**  
**12midnight**

**P.O. BOX 250038 • GLENDALE, CA 91225**  
**Tel: 818-246-0125 • 818-239-6880 or 818-606-2070**  
**TAX ID # EIN 26-3208049**  
**E-mail: forourkids99@gamil.com**

